



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ltn
444

1999 1

pupper. In Queen. Shown at Upperfield.

C. Parker. 1864.

29.445

444-60

9-

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ սկզբ է որ պատիւն ու առաքինութիւնը տմեն մարդու պատուական ըլլան, օրինակներն առաջին են որ աս երկու բանին իրենց բոլոր մտադրութիւնն ու զգուշութիւնը նույիելու պարտական են, քանզի անոնց բարոյական շահն ալ ասոնցմէ կախում ունի: Ապա մեղադրելի չենք որ առ փոքրիկ առաջ կը համարձակինք մատուցանել և սեփան նորաբոյս հասակակիցներու հաւատավոր թէ գործը որչափ դոյզն ալ է, օգուտը նուազ պիտի քլայ:

Արդարեւ վեցը հագումնէ այն անուան արժանի է. բայց իր բարոյական նկարագրովը, գէթ նորահաս օրիորդի մը համար կրնայ ըստիլ թէ կարեւոր է: Հոս բարեպաշտ հեղինակը սրտառուչ կերպով ներկայացուցած է վրանգներն ու յաղթանակը այնպիսի անմեղութեան մը՝ որուն հիմն եղած է սքանչելի մօր մը օրինակին վրայ հաստառած դաստիարակութիւն մը: Դաստիարակութիւն մը որ կենդանի օրինակի վրայ կը յենու, եւ ծնողաց օրինակին վրայ, միայն կրնայ յաղթանակել: Ապա աս վեալը խրատ է որչափ օրիորդաց, նոյնչափ ծնողաց:

43945-4-2-

'9



ԳԼԱՓԱ

ԿԱՄ



Պատերազմին քանդուած վաղեմի ամրոցի
մը մէջ, մինակ եւ առանձին կ'ապրէր գիւնե-
կոնտա, որ ճակատու մէջ մեռած քաջ զին-
ւորի մը սյրին էր :

Գիւնեկոնտա երեւելի, բայց ձախորդու-
թիւններով աղքատացած ընտանիքէ մըն էր .
իր ծնողներէն որբ մնացած ըլլալով, առանց
այն ատենուան նախապաշտումներուն ականչ
դնելու, ամուսնացաւ գնդապետի մը հետ որ
աղնուական չէր, եւ իր թոշակէն զատ ուրիշ
հարստութիւն չունէր. ուստի եւ հարկաւ հա-
մեսա եւ չափաւոր կեանք մը կ'անցնէին :

Եօթը տարի , թէպէտ չափաւորութեամբ ,
բայց երջանիկ կերպով մէկտեղ ապրելէ ետքը
Գիւնեկոնտա իր ամուսինը կռուի մը մէջ կոր-
սընցուց : Ուստի 6 տարեկան աղջիկ զաւակով
մը գրեթէ առանց ապրուստի այրի մնալով ,
ձեռագործ ընելու ստիպուեցաւ . քանզի ա-
սով միայն կարող էր կարեւոր ապրուստը հո-
գալ : Ամրոցը ծախուեցաւ , եւ ամրոցին նոր
տէրերը , կամ անտարբերութենէ եւ կամ 'ի
գթոյ , թոյլ տուին որ Գիւնեկոնտա ամրոցին
աւերումէ ազատ մնացած մէկ կողմը բնակի :

Այսպէս իրեն ապաստանի տեղ հոգալէն ետ-
քը , սկսաւ մշակել փոքրիկ արտ մը որ նոյն-
պէս իրեն շնորհուած էր : Խեղճ այրին , թէ-
պէտ գլխուն այսչափ ծախորդութիւններ ե-
կան , երբէք վայրկեան մը չվհատեցաւ . քան-
զի Աստուծոյ վրայ հաւատք ունէր , եւ անոր
վրայ ունեցած վստահութիւնը զինքը կը զօ-
րացնէր որ համրերէ , ոչ միայն հաստատու-
թեամբ այլ եւ շնորհակալութեամբ իր այս վի-
ճակին , որ թէպէտ արդէն խիստ եւ դառն
էր , բայց աւելի թշուառ կրնար ըլլալ . բաց
աստի Գիւնեկոնտա մայր ալ էր , եւ այս անունը
ոչ ապաքէն անոր վրայ պարտաւորութիւններ
կը դնէր . ոչ ապաքէն ինքզինքը բոլորովին
իր սիրելի Գլարային նուիրելու պարտական էր :

Աւստի իր բոլոր սէրն ամփոփեց այս սիրելի զաւկին վրայ որ այնուհետեւ պիտի ըլլար իր մինակ մխիթարութիւնը . սկսաւ անոր ստէպ կրկնել իր մատաղ մանկութենէն 'ի վեր , Արարշին սէրը . անոր սովորեցուց շնորհակալը ըլալ նաեւ այս վիճակին մէջ Աստուծոյ բարերարութիւններէն որ մեզ կը փորձէ , որպէս զի մեր ըրած զոհերուն փոխարէն յետոյ մեզ վարձատրէ :

Փոքրիկ Գլարան , թէսլէտ տակաւին տղայ էր , այնպէս ուշիմ եւ հանճարեղ էր , որ մայրն առանց դժուարութեան , առաքինութեան գլխաւոր սկզբունքներն անոր սովորեցնելու կարող եղաւ : Ամեն օր միաբան բարութեան եւ արդարութեան Աստուծոյն հայրական խընամքն օրհնելէ ետքը քաջալերութեամբ կը զբաղէին ձեռագործի որ իրենց ապրուստին համար ան վիճակին մէջ հարկաւոր էր : Գիւնեկոնտա իւր փոքրիկ պարտէզը մշակելու կը պարագէր . որչափ քաղցը կը թուէր անոր կը բած աշխատութիւնը , երբ երկրին արդիւնքն առնելով իր դժուարին ջանքն օրհնուած կը տեսնէր : Պարտէզին պտուղը եւ ասեղնագործութեան դոյզն արդիւնքն ասոնց համեստ պիտոյիցը բաւական էին : Փոքրիկ Գլարա ըստ կարի մօրը կ'օդնէր , եւ անոր խնամքը , թէ-

պէտ դուզնաքեայ էր , մեծապէս զոհ կ'ընէր
աս խեղճ այրին որուն բովանդակ ուրախու-
թիւնն ան փոքր դստրիկն էր :

Բարեկամներէ զուրկ էին , քանզի աղքատու-
թիւնը քիչ բարեկամունենալու սովոր է . բայց
Գիւնեկոնտա մեծարոյ էր գիւղացւոց քովը . ո-
րոնք անոր խորին խմաստութեանը հետ բարե-
պաշտութեան մեծութիւն ալ գտնելով , ստէպ
խորհուրդ հարցնելու համար կուղային : Ամեն
մարդ անոր խմաստուն խորհուրդները միշտ
զարմանօք մտիկ կ'ընէր . քանզի վշտահար-
ներն անոր խօսքերուն մէջ մխիթարութիւն
կը գտնէին . վերջապէս Գիւնեկոնտա սիրելի
եղած էր ամենուն որ իր խորհուրդները լսե-
լու կը վութային : Ինք թշուառութեան դըպ-
րոցը կրթուած ըլլալով , մարդկային վիճակին
փոփոխութեանը վրայ ունեցած վորձառու-
թեամբը , գրեթէ ՚ի վեր քան զբնութիւն հան-
ձար եւ խմաստութիւն ստացած էր :

Ինչպէս ըսինք , Գիւնեկոնտա աղնուական
ընտանիքէ էր , բայց աղնուականներէն մէկն
ան տեսնելու չէր գար . թշուառութիւնն ու-
ժախորդութիւններն աղնուական մարդիկ տ-
նոր քովէն խսպառ հեռացուցած էին : Սակայն
անոնց անհոգութիւնը Գիւնեկոնտային բնաւ
փոյթը չէր . եւ աւելի կ'ընտրէր իր առանձ-

նութիւնը քան ան ցուրտ գթութիւնը որով ազ-
նուական մարդիկ անոր կարեկից կրնային ըլ-
լալ : Գիւնէկանտա ամեն բանէ աւելի իր աղ-
ջըկանը դաստիարակութեանը միտ կը դնէր :

Անոր հետ ամեն կիրակի պարկեշտութեամբ
մատուռ կ'երթար ուստի Գիւնեկոնտա ոչ
միայն իր թշուառութեանցը . մէջ ցցուցած
համբերութեամբը զարմանալի էր , այլ եւ իր
բարեպաշտութեամբը : Եթէ երբէք իր նախնի
փառաւորութեանը վրայ մտածելով կը հառա-
չէր , պատճառը սա երկիւղն էր թէ գուցէ օր
մը իր սիրելի դուստրը կարօտութեան մէջ իյ-
նայ . եւ ասոր ալ առջեւն առնելու համար
փոքրիկ աղջիկը իր տղայութենէն . աշխատա-
սէր եւ ժիր կեանքի վարժեցնել փոյթ տարած
էր : Գիւնեկոնտա աղքատութեան մէջ իյնա-
լէն ետքը՝ ունեցած պատռական քարերը եւ
ուրիշ ունեցած զարդերը հետ զհետէ ծախե-
լու ստիպուած էր . բայց անոնց սպառելուն
չսպասելով՝ ձեռագործներով եւ ուրիշ աշխա-
տութեամբք իր ասլրուսաը հոգալու դանդա-
ղած չէր : Քանի քանի անգամ աղջիկը գլուկն
առած այսպէս կ'աղօթէր . «Ո՛վ Աստուած իմ,
» գիտես թէ քեզ միշտ որչափ սիրեցի , եւ
» քեզի ունեցած վստահութիւնս որչափ մէծ
» է , նոյն վստահութեամբ է որ յետին թշուա-

» ոռւթեանս մէջ անգամ քենէ երբէք չպակ-
 » սեցաւ , քու առջեւդ կ'իյնամ քեզի պաղա-
 » տելու համար որ զաւկիս վրայ միշտ հսկես ,
 » զիս լուսաւորես , եւ այս մանուկն առաքի-
 նութեան ճամբուն մէջ ուզդելու միջոցներն
 » ինծի ցուցնես : Այսպէս աղօթելէ ետքը գը-
 րեթէ միշտ քաջալերութիւնը կ'աւելնար , քան-
 զի աղօթքը մխիթարելու եւ զօրացունելու սո-
 վոր է : Աղօթքն է որ մեզի ձախորդութեանց
 համբերութեամբ տանել կը սովորեցնէ . ապա
 որչափ մխիթարութիւն կը զգան անոնք որ
 ճշմարտապէս բարեպաշտ են : Գիւնեկոնտա ա-
 սոնք զիտէր ուստի երբ վհատութիւն մը կը
 զգար , իսկոյն կը փութար Աստուծոյ աղաչանք
 մատուցանել որ իր տառապեալ հոգին նորէն
 զօրացնէ .

Գիւնեկոնտա իր աղջիկն առտնին գործերու
 մէջ քաջ վարժելով անոր միտքն ալ կրթելու
 անհոգ չէր . եւ Գլարա որ 'ի բնէ հանճարեղ
 եւ ուշիմ էր , մօրը փախաքներն արդիւնաւոր
 ընելու բոլոր զօրութեամբ կը ջանար :

Անոր ուսման համար ունեցած փոյթը՝ մօրն
 անսպատմելի ուրախութեան եւ երջանկութեան
 պատճառ էր , ուստի եւ անոր պարծանքն ե-
 ղած էր .

Իրենց առանձնութեանը համար բնաւ չէին

վշտանար . իրենց փոխադարձ սէրն իրենց բաւական էր , եւ անոնց խաղաղ կեանքն անշուշտ նախանձելի պիտի ըլլար ան ազնուականներուն որոնք խսպառ երես դարձուցած էին , եթէ իմանալու ըլլային թէ ասոնց կեանքը , թեպէտ չափաւոր ու համեստ , բայց որչափ երջանիկ էր :

Ամեն առաւօտ , երբ անկողինէն կ'ելլէին , իրենց աղօթքն Արարչին կ'ուղղէին , որպէս զի ան աղօթքով իրենց աշխատութեանը համար հարկաւոր եղած զօրութիւնը ստանան . նոյն պէս ամեն իրիկուն Քրիստոսի պատկերին առջեւ ծնկան վրայ եկած անոր շնորհակալ կ'ըլլային որ իրենց շնորհեց ինչ որ առտուան աշօթքին մէջ իրմէ խնդրեցին :

Գլարային մանկութեան ժամանակին դէպքերն ասոնք են . Գլարա անմեղութեամբ եւ աստուածալաշտութեամբ գեղեցիկ մեծցաւ . Գիւնեկոնտա երջանիկ էր երբ կը տեսնէր որ իր սիրելի աղջիկը կրից հասակը կը հասնի , առանց կրից փորձն առած ըլլալու կամ բնաւնշմարած ըլլալու թէ կիրքն ինչ է . քանզի սիրտը վերջին աստիճան մաքուր եւ սուրբ էր եւ մօրը վրայ ունեցած սէրն այնպէս սաստիկ էր որ ուրիշ սիրոյ տեղի տուած չէր :

Կիրակի օր մը երբ ըստ սովորութեան եկեցի կ'երթային, Գիւնեկոնտա ուրիշ աղջկան մը պատահեցաւ, որ ատենօք անտառներու վերակացութիւնընող եւ Գիւնեկոնտային ծանօթ մէկուն դուստրն էր : Աս աղջկան հայրը Գիւնեկոնտային հօրն ալ շատ սիրելի եղած էր, եւ Վոլֆսպրիւնի դղեկէն գրեթէ մղոն մը հեռուն կը բնակէր : Մանուկ աղջկան անունը Պերթա էր, եւ կուգար աղաչելու Գիւնեկոնտային որ ժամանակ ժամանակ տուն գալու եւ Գլարայէն կար կարել սորվելու թոյլ տայ : Գիւնեկոնտա որ ինչպէս ըսինք, աղջկանը ծերունի հայրը կը ճանչնար . եւ աղջկան բարեպաշտութեանը վրայ ալ ապահով էր, հաւանեցաւ որ տուն գայ երբ որ ուզէ : Պերթա առթոյլտութեան համար շնորհակալ եղաւ եւ սկսաւ երթալ գալ : Այս երթեւեկութենէն երկու մանուկ աղջկանց մէջ տեղ, սերտ բարեկամութիւն մը ծագեցաւ եւ Գիւնեկոնտա աս մտերմութենէն շատ գոհ էր, քանզի ուրախ էր դստերն այսպիսի ընկեր մը ունենալուն' որուն վրայ վստահ էր : Ուստի ասոնց հանդարտութիւնն ու խաղաղութիւնն աս օտար աղջկան գալովը ամենեւին չվրդովեցաւ : Երկուքին ալ աս աղջկան տուած սէրը՝ իրենց իրարու վրայ ունեցած սէրը բնաւ շնուազե-

ցուց , ոչ միայն Գլորա , այլ եւ մայրը կը դըժ-
ուարէին երբ բաժանման ժամը կուգար , եւ
հետեւեալ օրը նորէն իրար տեսնելու խոստ-
մամբ միայն կրնային իրարմէ բաժնուիլ : Բայց
այսպիսի մեծ երջանկութիւն մը , այսովհիսի եր-
ջանիկ կեանք մը երեքին համար ալ ցաւալի
դիպուածով մը սիհտի վրդովէր :

Պերթա աս երկու առանձնացելոց սիրելին ,
ծանր հիւանդութեամբ մը պառկեցաւ . եւ որով-
հետեւ հօրմէն ուրիշ մէկը չունէր , հարկ ե-
զաւ որ Գլորա ամեն որ երթայ եւ իր բարե-
կամին դարմաններն ընէ : Գլորա ամեն առա-
ւոտ մայրը գորովանօք ողջադուրելէ ետքը ,
կ'երթար , եւ երբ իր սիրելի Պերթային քով
կը հասնէր անիկա անկեղծ բարեկամի մը ըզ-
գացած ամեն կերպ հանճարեղ եւ զուարթ
խօսքերով կը միսիթարէր : Անոր աղօթները
միշտ եռանդագին էին , բայց հիմա աւելի ե-
ռանդագին եղան . քանզի Գլորա Պերթային
մեռնելէն այնչափ կը վախճար որ բոլորովին
աղօթքի ապաւինած էր : Իր բարեպաշտու-
թեանը մէջ քաջալերութիւն գտաւ . եւ թէ-
պէտ Պերթային հիւանդութիւնը սաստկացաւ ,
բայց Գլորա անոր առողջութենէն ընաւ յու-
սահատ չեղաւ : Ամեն իրիկուն մօրը քով կը
դառնար , բայց ամեն բան պատրաստելէն ետ-

քը , որպէսզի հիւանդ աղջիկն իր բացակայութեան ատենը բանի մը պակսութիւն չունենայ : Ամեն պատրաստութիւն ընելէն ետքը իրարմէ կը բաժնուէին , Գլարա խեղճ հիւանդին սիրտ կուտար որ մինչեւ հետեւեալ օրն իրեն սպասէ , անոր առողջութեան վիճակին վրայ սա մխիթարական խօսքերը կ'ըսէր . Միշտ յուսա , սիրելիս Պերթա , Աստուած Երբէք չի լքաներ զանոնք որ զինքը կը սիրեն . Եւ քեզի պէս կ'աղօթեն : Անոր բարութեանը վսահ եղիր . քաջալերուէ , քու առողջութիւնդ պիտի հաստատուի , եւ քու Երջանիկ բժշկութեանդ համար քեզի հետ միաբան Աստուծոյ շնորհակալ պիտի ըլլանք : Աս խօսքերէն վերջը միշտ զինքը կը համբուրէր , եւ ետքը իր բնակարանը կուգար յուսալով թէ հետեւեալ օրն իր բարեկամն աւելի առողջ պիտի գտնէ :

Վերջապէս այս բաղձալի օրը հասաւ . Պէրթա հիւանդութենէն զերծաւ , եւ քիչ քիչ ուժ առնելու սկսաւ : Ալայնչափ պէտք չունէր Գլարային օգնութեանը , քանզի տկարութեանը հարկաւոր եղած քանի մը փոքր դարմաններն ընելու՝ հայրն ալ բաւական էր :

Զմեռուան գեղեցիկ եւ ցուրտ օրուան մէկը Գլարա Պերթայէն ետ կը դառնար , ուրախ

սրտով , քանզի իր բարեկամը գրեթէ բոլորովին
առողջ գտած էր . եւ կը խորհէր թէ քիչ ա-
տենէն առաջուան պէս , առանց մօրմէն հե-
ռանալու , դարձեալ իրար տեսնել կարող պի-
տի ըլլան . մինչ ճամբայ մը դառնալով՝ յան-
կարծ տեսաւ գայլ մը որ բերանաբաց շիտակ
դէսլ իրեն կուդար : Սաստիկ վախնալով , ու-
զեց վախչիլ . բայց ոտուըները չորցած ճիւ-
ղերու փաթթուելով , անզգայ գետինն ինկաւ :
Երբ զդայութիւնը նորէն դարձաւ , տեսաւ որ
քովս երեք անծանօթ մարդիկ կան . ասոնց
մէկն՝ որ միւս երկուքին տէրը կ'երեւէր , որ-
սորդի հանդերձներով էր . միւս երկուքն որ
ծառայ ըլլալ կը թուէին , անոր հետ իրեւ
սալասաւոր եկած էին : Առաջնոյն համեստ ե-
րեւոյթն աղջկանը սրտին հանդարտութիւն
տուաւ . ուստի ամօթիսածութեամբ աղաչեց
անոր որ պատմէ թէ ինչ կերպով գայլին վր-
տանգէն ազատեցաւ :

Ան ատեն անծանօթը պատմեց այսպէս .
Քանի մը օրէ 'ի վեր աս մարդոց հետ գաղա-
նին հետամուտ էի , եւ ուրախ եմ որ վրայ
հասայ մինչ գայլը կատաղութեամբ քու վրադ
յարձակելով քեզ փարատելու մօտ , էր . քան-
չի գիտեմ որ այսչափ օր անտառներուն մէջ
հալածական շրջելով , իրեն որս գտնելու պա-

տեհութիւն չունեցաւ . հալածողներուն ձեռքէն
պրծելու ջանքը ժամանակ չ'էր տար որ որս
փնտոէ : Աս ըսելէ ետքը , յարդական խօսքե-
րով , Գլարայի առաջարկեց որ թեւը մտնե-
լով , զինք մինչեւ տուն տանի . քանզի կը վախ-
նար թէ երկիւղն ու դողը խեղճ աղջիկը տը-
կարացուցած ըլլալով , գուցէ շկարենայ առանց
ուրիշի մը բազուկներուն կոթնելու իր բնա-
կարանը երթալ : Բայց մենք աս ոլտութիւ-
նը յառաջ տանելէ առաջ , մանր տեղեկութիւն
մը տանք այն անձին վրայ որ Գլարան սոսկա-
լի մահուան վտանգէն ազատեց :

Արդ յիշեալ անձը հաղիւ քսան եւ հինգ
տարուան էր , առոյգ եւ կայտառ մարմնով ,
ու սկերճ հասակով : Այն դարուն հագուստն
ունէր , այսինքն կանանչ բաճկոն մը մարմնոյն
վրայ այնպէս պինդ որ հասակին վայելուչ եւ
առոյգ ու շոյտ ձեւը կը յայտնէր . գլուխն ու-
նէր մանոշակագոյն թաւիշէ խոյր մը , դա-
շոյն մը կապած մէջքը . ձեռքն ու նիզակա-
ձեւ սլաքմը՝ որ հին ժամանակներն որսորդու-
թեան ատեն կը գործածուէր : Վերջապէս
ոտքը հաստը մորթէ կօշիկներ : Բոլոր զարդն
ու կազմածն աս էր . բայց դէմքը քաջութեան
հետ միանգամայն քաղցրութիւն մ'ալ կը ցու-
ցընէր . կերպարանքին վրայ այնպիսի պարզու-

թեան դրոշմ մը կ'երեւէր որ անոր անհամե-
մատ բարութեանն ու անմեղութեանը նշան էր :

ինք էր խարտեաշ , եւ խիտ մազերուն խո-
պոսիքը մինչեւ ուսերը կը շօշափէին . կա-
պուտակ աչուըներն ունէին թուխ յօնքեր . գե-
ղեցիկ կամարաձեւ թիթը խիստ վայելու .
խօսքերը թէպէտքիչ մը արհամարհոտ , բայց
ոչ ամենեւին առանց քաղցրութեան եւ մար-
դասիրութեան . մէկ խօսքով , ամեն բանով
այնալէս էր որ ամենուն սէրն ու վատահու-
թիւնը կընար գրաւել , գէթ Գլարային վրայ
այս արդիւնքը յառաջ բերաւ . քանզի Գլարա
այս երիտասարդը տեսնելուն պէս , փոխանակ
իր սովորական երկչոտութեամբն անկիէ վախ-
նալու , սրտին մէջ անդորրութիւն , ապահովու-
թիւն մը իմացաւ , ուստի եւ առանց ակնա-
ծութեան թեւը մտնելով , եկաւ մինչեւ Վու-
ֆսպրիւնի դղեակն , ուր Գլարա եւ մայրը կը¹
բնակէին : Արդ որսորդ երիտասարդը Գլարա
մինչեւ հոն բերելէ ետքը , մեկնեցաւ . ան ա-
տեն աղջիկը դողալով , մօրը եկաւ ու պատմեց
այն սոսկալի պատահարն որուն զոհ սիմի ըլ-
լար , եթէ այն քաջ երիտասարդն օդնութեան
հասած չըլլար : Այս պատմութիւնը սլատմե-
լու ատեն մայր ու աղջիկ իրար ստէալ կը համ-
բուրէին , քանզի երկուքին ալիրար տեսնելուն

ուրախութիւնը խիստ մեծ էր : Պատմութիւնն
աւարտելէ ետքը , սկսան Աստուծոյ աղօթել ,
շնորհակալ ըլլալով որ զիրենք գրեթէ սքան-
չելեօք այսպիսի ահագին վտանգէ մը փրկեց .
աղօթքին մէջ այն քաջ երիտասարդն ալյիշե-
լու չմոռցան : Բայց այս դիպուածէն ետ-
քը , Գլարա խորին մտածութեան մը մէջ ին-
կաւ , առանց դիտնալու թէ իր այս տըխ-
րութեանը պատճառն ինչ է :

Գիւնեկոնտային բնակարանէն քիչ մը հեռու
աղբիւր մը կար որ Աղբիւր Մարեմայ կը կոչ-
ուէր . աղբիւրին յստակ եւ սլայծառ ջուրը կը
բղխէր խորունկ այրի մը մէջ , որ չորս կողմանէ
ապառաժներով պաշարուած՝ գրեթէ կորսուած-
էր . Այրին վերի դին Աստուածածնայ արձան
մը կար Յ՛սուս գիրկը , եւ արձանին գլխուն
բոլորտիքը ճառագսյթարձակ փառք մը :

Աս մթին տեղւոյն բարձրութեանը վրայ ,
Տիրամօր այս արձանը կ'երեւէր իրեւ պաշտ-
պան կամ պատրաստ մխիթարելու զանոնք որ
իրենց վիշտերը յայտնելու , կամ իրենց տառա-
պանաց վերջ մը խնդրելու կուգային : Կուրծքը
զարդարուած էր տեսակ տեսակ մանեակնե-
րով զորոնք կամ խնդրուած մը ընելու եւ կամ
իրենց խնդրուածն արդէն ընդունուած ըլլա-

լուն համար Տերամօրը շնորհակալ ըլլալու ե-
կող ջերմեռանդ ուխտաւորները միշտ կը նը-
ուիրէին :

Գլարա ուրիշ անգամներ ալ սուրբ Կոյսին
այս արձանին այցելութեան եկած էր, բայց
վերջին դիպուածէն ետքը, գրեթէ բոլոր օրը
հոն կ'անցնէր : Գիւնեկոնտա իր սիրելի աղջիկը
տիսուր տեսնելով կը վշտանար, եւ անոր տըրտ-
մութեանը պատճառը չկրնալով հասկնալ, միտ-
քը դրաւ որ անոր ետեւէն երթայ, յուսալով
թէ թերեւս անոր վշտացը կրնայ տեղեակ ըլ-
լալ : Ուստի օր մը ելաւ Գլարային ետեւէն գը-
նաց : Գիւնեկոնտա հոն հասնելուն պէս՝ տե-
սաւ որ Գլարա այրին դրանը մէջ նստած գը-
լուխն ալ աջ ձեռքին վրայ դրած, աչուընե-
րէն դառն արտասուք կը թափէր : Գիւնե-
կոնտա իսկոյն անոր մօտեցաւ, բայց այնպիսի
զգուշութեամբ, որ Գլարա չկրցաւ իմանալ
թէ սիրելի մայրը քովը կայնած իրեն արտաս-
ուակից կ'ըլլար : Աիրելի՛ աղջիկս, գոչեց յան-
կարծ Գիւնեկոնտա . ինչ ունիս . այս քու տա-
ռապանքդ զիս յուսահատ կ'ընէ . չես, հաւա-
տար թէ, քեզ մխիթարելու կարողէեմ : Խեղճ
Գլարային վիշտերն անոր սիրտն այնպէս հեղ-
ձամղձուկ ըրած էին, որ ուրիշ պատասխան
չկրցաւ տալ բայց եթէ արտասուել :

Գիւնեկոնտա . աղջկանն այս մեծ ցաւը տես .
նելով աւելի ստիպով սկսաւ պնդել : Սիրելի
աղջիկո , ըստ . դռն ինէ բնաւ գաղտնիք
պահած չես . ոչ ասլաքէն նոյն գորովագութ
մայրն եմ . քեզի ինչ ըրած եմ , որ հիմա ինծի
դէմ այսպէս անվատահութիւն կը ցուցնես :
Հոռթիւնդ զիս կը նեղէ , Գլարա . դիտցիր որ
եթէ վիշտերդ ինծի յայտնես , զանոնք կրնամ
մեղմացնել , զոնէ քեզի կարեկից կրնամ ըլլալ :
Գլարա մօրն աղաչանքներէն 'ի գութ շարժե-
լով , անոր պարանցն ինկաւ , մայրը գրկեց ու
ամչնալով , ըստ թէ . այն անծանօթ երիտա-
սարդին պատահելէն 'ի վեր անոր յիշատակը չի
կրնար մոռնալ . ամեն ջանք ըրաւ որ այն խոր-
հուրդը մտքէն հեռացնէ , բայց 'ի գուր :

Գլարա , ըստ մայրը , դռն կը սիրես , բայց
քեզ այս զգացմանը բոլորովին չտուած , սլար-
տիս խորհել թէ սիրելու կերպին մէջ մեծ
տարբերութիւն կայ : Ճշմարիտ սէրը դիւրաւ
կը ճանչցուի , աղջիկո . քանզի այն որ սէրը կը
զգայ , սիրած անձին քով երկիւղած է եւ լի
մեծաբանօք , այնովիւոյն խօսքերը մաքուր եւ
պարիկեշտ են : Կը զգուշանայ ան բաներէն որ
կրնան առաքինութեան երկիւղ պատճառել .
իր սիրելոյն ամրւծութեանը վրայ կը պարծի .
ուստի անիկա կը համարի այնովիսի չքնաղ էակ

մը՝ որուն հայելոյ նման մաքրութիւնն անմա-
քոր շնչով մը , որչափ թեթեւ ըլլայ , կրնայ
պղտորիլ . Այսպիսի անձ մը , աղջիկո , անկեղ-
ծութեամբ կը սիրէ , եւ սիրուելու ալ արժա-
նի է . անոր սէրը պարկեշտ սէր է : Ընդ հա-
կառակն անպարկեշտ սէրը , կատաղի եւ ան-
զգոյշ է . ոիրած անձին պատիւը պահելու բը-
նաւ կող չըներ . վերջապէս իր անզգոյշ վար-
մունքովը կը ցուցնէ թէ սէրը շտա բուռն եւ
ոժգին ըլլալուն համար , չի կրնար տեւողա-
կան ըլլալ :

Ապա ուրեմն , ինչ ընեմ , սիրելի մայրս , ը-
ստու Գլարա քու խմաստոն խրատներուդ կա-
րօս եմ :

Աղջիկօ , գիտեմ որ երիտասարդը զոր դուն
կը սիրես , բարեքարոյ եւ աղնուասիրտ է , ինչ-
պէս որ քեզի հետ վարուելուն մէջ յայտնեց :
Բայց քեզ դղեակը քերած օրէն ետքն անիկա
ալ չտեսա՞ր :

Շատ անգամ Պերթային սենեակը տեսայ ,
ըստ Գլարա : — Քեզի հետ մեծարանօք վար-
ուեցա՞լ . սիրոյ եւ ամուսնութեան՝ վրայ՝ բնաւ
խօսք չըրա՞լ :

Ոհ , մայր , լսելու էիք առաջինքնելք . պիտի
որչափ երջանիկ կը համարէր ^Հ եթէ կեանըն
ինձի հետ անցնելու կար լըլլակ . դէմքին եւ



խօսքերուն մէջ ինչ անկեղծութիւն կը փայլէր : —Մտածէ , որդեակ , քու կացութիւնդ , մտածէ թէ քու եւ անոր մէջ տեղ ինչ մեծ հեռաւորութիւն կայ : Ան անտառներու հարուստ վերակացուի մը որդի է . հայրն երբէք չի կը ընար հաւանաթիւն առլ որ որդին քեզի սկզբաւոր աղջիկ մ'առնէ . այս յիմար սէրը սըրտէդ հեռացուր , Գլազա . այս սէրը քեզ անշուշտ թշուառ կ'ընէ . եւ սպարտիս այս օրու ընէ այն անձին տեսութենէն հրաժարիլ . քանզի դուն երբէք անորը չես կրնար ըլլալ :

Ո՞հ , մայր , ինչ կ'ըսես . չես գիտեր թէ այն անձը որչափ կը սիրեմ , անիկա մոռնալ ինձի համար մեծ զոհ մ'է . ոհ , այս բանն ընելու կարող չեմ :

Գլազա , դուն այնչափ իմաստուն եւ այնչափ առաքինի ես , որ չես կրնար սնուցանել այնալիսի յարաքերութիւններ որոնք քեզի նախատինք միայն կրնան ըլլալ . եւ այն երիտասարդը , եթէ քեզ ճշմարիտ սիրով կը սիրէ , սիրելի աղջիկս , քեզ տեսնելու փափաքէն սլարտի հրաժարիլ , քանզի , եթէ այս յարաքերութիւնները տեւեն , չարիքէ ուրիշ բան չի կրնար յառաջ դալ :

Արդարեւ , աղջիկս , այս պահանջումն քեզի շատ արտասուք սիրտի թափել տայ , բայց

եթէ քաջ խորհիս այն ցաւակի դէպքերուն վը-
րոյ որոնք կընտն ծագել եթէ այն երիտա-
սարդին հետ յարաբերութիւն ունենալու շա-
րանակես , ինծի շնորհակալ պիտի ըլլաս , որդ-
եակ , որ այս բանիս համար քեզի դէմ կեցայ .
հաւատա որ քեզ այսպէս վշտապին տեսնելու
շատ կը ցաւիմ . եկու , ուրեմն , միաբան Աստու-
ծոյ աղօթք ընենք , եւ Աստուած քու սրտիդ
հանդարտութիւն սիխտի տայ :

ԱՌ , սիրելի մայրս պատասխան տուաւ Գլ-
ւարս . քու դիտողութիւններուդ արժէքը կը
ճանչնամ , եւ թէպէտ աս զոհս որ պիտի ը-
նեմ , ինծի մեծ վիշտ է , կը խոստանամ այլ ե-
ւս այն անձը շտեսնել :

Խօսք տուր ինծի , որդեակ , Սուրբ կոյսին
պատկերին առջեւը որ ներկայ է , թէ սրտիդ
եւ հոգւոյդ մաքրութիւնը պահելու պիտի ջա-
նաս :

Խօսք կու տամ , մայր • ահա այս Տիրամօ-
րըն առջեւը կ'առաջադրեմ որ քու խմասուն
խրատներուդ պիտի անսամ : Աս ըսելով ,
Գլւարս ծնկան վրայ եկաւու գոչեց . «Ո՛վ սուրբ
Աստուածամայր , ինծի քաջալերութիւն տուր
որ խօսքս բռնելու կարող ըլլամ . եւ ինծի զօ-
րութիւն տուր որ սրտէս բոլորովին հանեմ ա-

մեն յիշատակ որ առանց արատի սրախ մէջ չէ
կրնար մնալ :

Սիրելի մայր իմ, գոչեց Գլարա ոտքի վրայ
ելլելով, ամրացուր քու աղջիկդ, եւ զօրացուր
անոր քաջալերութիւնը . Աստուծոյ օգնութեամ-
բը եւ խրատներովդ, կը յուսամ թէ առաջա-
դրած նպատակիս պիտի հասնիմ, այն է՞ քու
խանդաղատանացդ միշտ արժանի ըլլալ: Գիւ-
նեկոնտա աղջկանը քով ծնկան վրայ գալով,
մնձ եռանդեամբ աղօթք ըրաւ . աղօթքէն ետ-
քը՝ երկուքն ալ աւելի հանդարտ ելան :

Գլարային վիշտը տակաւ կը նուազէր, բայց
խոպառ չդաղրեցաւ . քանզի այնչափ շատ կը
սիրէր որ խոպառ մոռնալ չէր կրնար: Աս առ-
երեւոյթ հանդարտութենէն եւ հնազանդու-
թենէն մայրն այնպէս կարծեց թէ աղջիկը ըո-
ւորովին բժշկուեցաւ :



ԳԼՈՒԽ. Բ

Գլարային յանդշտակառութեանը

Գլարային սլատահած դէպքին համբաւը քիչ
առենուան մէջ բոլոր շրջակայները տարածուե-
ցաւ . ամեն մարդ անոր գեղեցիութեանն ու
առաքինութեանը վրայ միայն կը խօսէր : Ու-
պէտ գիւնեկոնտա եւ աղջիկը միայնութեան
մէջ կ'ասլրէին , ամեն մարդ զանոնք ճանչնալ
եւ անոնց հետ յարաքերութիւն ունենալ կը
բաղձար , բայց անոնք ամեն կողմանէ իրենց եւ-
կած հրաւէրներն ընդունելու ըստ կարի կ'ըլ-
դու շանային . քանզի համեստ եւ առանձնու-
թեան մէջ ասլրելու սովորած էին . մանաւանդ-
որ փորձով գիտէին թէ մարդ միայնութեան
մէջ որչափ երջանիկ է : Գլարա մանաւանդ իր
սլատահարին օրէն ՚ի վեր , առանձնութիւն կը
խնդրէր , այնպէս որ Պերթային այցելութիւն
ընելու անզամ հազիւ կ'երթար : Անոնք որ այս
սիրուն անձը ճանչնալ սաստիկ կը փափաքէ-
ին , անձամբ այցելութիւն ընելու կը համար-
ձակէին . ու միշտ Գլարային խելքին ու գե-
ղեցկութեանը վրայ ապշելով կ'երթային , դար-
ձեալ զալու գիտաւորութեամբ . թէպէտ Գլ

լարա եւ մայրն այցելութիւն ընդունելու այն
 չափ յօժարութիւն չէին յայտնէր : Գիւնեկոն-
 տա վախնալով որ դուցէ աղջիկը հրապուրանաց
 անսայ , անոր անդադար այս բանիս համար
 խրատ կուտար . ինքն առենօք աշխարհի մէջ
 սպրած ըլլալով , զիտէր թէ մարդոյ խօսքերը
 որարով են , թէ այն խօսքերուն շատ քիչ հա-
 ստք ընծայել պէտք է : Աղօթքի աղաւինէ ,
 կ'ըսէր մայրը . Աստուծոյ զիրկը խնդրելու ես
 քեզի ապաստան , որսկոս զի աշխարհիս մա-
 տոցած փորձութիւններուն զէմ զնելու զօ-
 րութիւն ստանա : Աղէկ զիացիր , որդեսկ ,
 որ հեշտութիւնները մարդուս հոգւոյն մէջ զտ-
 արկութիւն մը կը թողուն , զոր լեցունել դժ-
 ուարին է , մանաւանդ երբ մարդ անոնց հրա-
 պուրանացը աեզի տայ : Սիայն կրօնքն է , որ
 մարդուս ոիրաց կրնայ լեցունել , եւ բոլորովին
 զոհ ընել : Իմ փորձառութեանո հաւատա , եր-
 ջանկութիւնը հոն չէ որ կ'երեւի թէ է : Աշխար-
 հային հաճութիւններով յուղեալ եւ խոսվեալ
 կեանքը չի թողուր որ մարդ աղօթքին քաղ-
 ցըր վայելումներուն ճաշակն առնէ : Այսպէս
 խօսելով , կը հաստատէր աղջիկն ան բարի ըս-
 կըզբանց մէջ զորս անդադար անոր սրախին մէջ
 տպաւրելու շէր դանդաղեր : Սակայն արդա-
 րեւ Գլարա բոլոր իմաստութեամբը ոլարտ էր

ջանալ որ իրեն տրուած հեշտութիւններէն չհրապարուէր . բայց աս աղջկան հանճարը եւ Աստուծոյ ու իր մօրն ունեցած սէրը՝ անոր , առանց դժուարէլու , առաքինութեան արգիլած հեշտութենէն հրաժարել կու տային :

Օր մը Գլարս մօրը լուսնալու տուած կը-
տաւը բերելու համար ձօրն երթալ սոխու-
ուեցաւ . 'ի դարձին իրիկուան մօտ էր . երկու
սպառազէն մարդիկ ճամբուն վրայ յանկարծ
վրան հասան բռնեցին եւ մահ սպառնացան ե-
թէ ճիկ հանելու ըլլար : Աղջկանն արտասուտ-
ցըն ու աղաչանացը շնոյելով ճիերէն մէկուն
վրայ նստեցուցին ու անտար տարին : Երբ
անտառին մութ եւ ամայի կողմը հասան , ու
ըիշ երկու սպառազէն մարդիկ եկան . ասոնք
ալ նոյն խմբէն էին : Անտառին մէջ քիչ մ'ալ
ճամբայ ընելէ ետքը , հասան մատուոի մը ա-
ւերակներուն , ու կանկ առնելով Գլարա ճիէն
իջեցուցին : Թշուառ աղջկան առաջին գործն
եղաւ , մատուոին առջեւ երթալով ծնկան վր-
առյ գալ եւ Աստուծոյ օդնութիւնը խնդրել :
Գլարա մօրը յուսահատութեանն ու անոր ա-
պագայ վիճակին վրայ կը մտածէր . չէր դի-
տէր թէ այն անծանիթ մարդոց մէջ ինչ պիտի
ըլլար . Մինչ Գլարա իւր աղօթքը կ'ընէր , մար-
դիկը կրակ վառելով կը սպառաստէին իրենց

ընթրիքը որմէ Գլարայի ալ մաս հանել կը խոր-
 հէին . բայց Գլարա այնպէս վշտագին էր , որ
 բնաւ կերակուր ուտելու ախորժակ չունէր .
 ուստի մերժեց ինչ որ իրեն որուեցաւ : Կը սագ-
 նասէր , կ'արտասուէր , կ'աղաջէր , բայց ա-
 նոնք անկարեկիր էին . եւ աղջկանը յուսահա-
 տութեանը վրայ կը ծիծաղէին : Գլարա ասոնց-
 մէ կարեկցութիւն խնդրելէ ձանձրացած , տես-
 նելով եւո թէ արտասուելով բան մը պիտի չը-
 կրնայ վճարել , խոր վհատութեան մը մէջ ին-
 կաւ : Այն սիսուր վայրկենին մէջ յիշեց թէ
 ինչպէս օր մը զայլ մը իրեն հետամուտ եղած ,
 եւ թէ զինք զաղանին բերնէն ազատելու հա-
 մար յանկարծ փրկիչ մը երեւցած էր . սկսաւ
 սրտին խորէն այն անձը կանչել , բայց . բարէ
 բաղձանքներն ընդունայն էին , ձայնը բը-
 նաւ արձագանգ չունէր , գանգաներն այն
 զգայութենէ զուրկ էակնէրուն զութն ամենե-
 ւին չէին շարժեր : Անոր սրտաբեկ եւ սրտա-
 սուշ անձը նոյն վայրկենին զրեթէ չիք ըլլա-
 լու մօտ էր : Վերջապէս աւազակներուն ձեռ-
 քէն պրծելու յոյսը բոլորովին հատած էր ,
 երբ , անսոնց ճամբայ ելլելու ատենը , յանկարծ
 ասպետ մը սուսերամերկ անոնց վրայ կը յար-
 ձակի . օդնական ունենութիւն իր սպասաւորնե-
 րըն որոնք անոր կու զային : Աւազակներէն եր-

կուքն իրենց հակառակորդներուն հարուածներին մեռան . մնացածները վախնալով թէ կը ու տին վախճանն իրենց աղետալի պիտի ըլլայ , խորհեցան թէ իրենց փրկութիւնը փախչելով միայն կրնայ ըլլալ , Գլարա իւր աղատչին թողւով , փախան : Երկու ողջ մնացած աւազակներուն մեկնելին ետքն , սապետն աղջկան մօտեցաւ , ու երբ սազաւարտին վրային դիմակը հանեց , Գլարա իսկոյն ճանչցաւ որ Հոհենստայնի Ատալալան սեպուհն է , զոր Վ. Լ. Փարիսինի եկեղեցին ստէպ տեսած էր . այս անձը Գլարային գեղեցկութեանը զարնուազներուն գըլխաւորն էր :

Ասպետը Գլարային հետ անոր հօրը վրայ խոսեցաւ եւ հուսկցուց թէ անոր զինուորակից եղած էր , եւ Գլարա շատ ուրախ եղաւ որ ընտանեացը բարեկամներէն մէկուն ձեռքովին ազատեցաւ . եւ կարծեց թէ շուտով կարող պիտի ըլլայ մայրն ողջադուրելու երթալ : Վերջապէս Գլարա տսպետին քաջաւրտաւթեանը համար անոր իւր շնորհակալութիւնները յայտնեց , աղաչեց եւս որ զինք շուտով տուն զրկէ . քանզի մայրը հոգէ աղստելու կը փութար . բայց տսպետն անոր իմացուց թէ մայրը շատ հեռուէ , ուստի իսկոյն անոր քով դառնալու չկըրնար յուստ . մանաւանդ որ ճամբաններն ամսա-

յի եւ աւազակուտ են : Վերջառիս հասկցուց
թէ հարկ է որ առ այժմ իր դղեկին մէջ սպա-
սըսպարուի : Գլարա շատ արտմեցաւ տեսնե-
լով թէ ուզած տեսնը մօրը չի կրնար դառնալ .
վերջառիս . ասպետին թախանձանքներէն ըս-
տիսուելով , տեսնելով եւս թէ հոն ասպետին
դղեկին ուրիշ ապաստանելու տեղ չկայ , անոր
ընակութիւնը երթալ համեցաւ : Ասպետն իւր
մօրաքեռը հետ դղեակը կը բնակէր : Գլարա
ասպետին եւ անոր մարդոցը հետ , որոնց ամեն
մէկուն ձեռքը մէյմէկ վառած ջահ կար , ան-
տախին մէջէն անցնելով , դղեակը հատաւ .
Գեղրաւաս Տիկինը որ ասպետին մօրաքոյրն
էր . զԳլարա սիրով ընդունեց : Ասպետը մօ-
րաքեռը պատեց թէ ինչու աւազակաց ձեռ ,
քէն ազատեց : Եւ աղջկան արտմութիւնը փա-
րատելու համար ամեն կարելի բան ըրաւ : Սա-
կայն անոր սիրով չիրցաւ զուարթացընել բայց
եթէ խոստանալով թէ հետեւեալ օրը մօրը սի-
տի տանի : Գեղրաւաս տիկինը Գլարային սի-
րակիր ընդունելութիւն մ'ըրաւ . անոր պատա-
հած դժբախտութեանը վրայ ցաւեցաւ , եւ քաղ-
ցըր խօսքերով ջանաց զնա մխիթարել :

Ընդարձակ էր սրահը ուր Գլարա ընդուն-
ուեցաւ : Օթատերուն վրայ այլ եւ այլ սպատե-
րազմական դէսլքեր նկարուած էին , եւ տեղ

տեղ ընտանեաց մէջէն երեւելի անձերուն պատ-
 կերները կամ կենդանագիրները կախուած կ'ե-
 րեւէին : Այս սրահին մէջ տեղը երենոս փայ-
 տէ ստախով պատուած սեղան մը կար , ո-
 րոն վրայ ուկին եւ արծթէ ամաններ դրուած
 էին . իսկ սրատէանները որ լուսամուտ երդե-
 րու ձեւով եւ գոյն զլոյն աղակիններով զար-
 դարուած էին , սրահին մէջ տղօտ եւ տխուր
 ըյս մը կուտային : Տիկին Գեղրուտա նատած-
 էր մեծ գոթական թիկնախորի մը վրայ , որ
 ան ընտանեաց մէջ զրեթէ դարէ մը 'ի վեր կը
 դործածուէր : Կակ Գլարա Հանդշեցաւ վոքք-
 եւ ցած ախտորի մը վրայ որուն շինուածքը թիկ-
 նախորին նման էր : Ապետը ոտքի վրայ կայ-
 նած , լութեամբ Գլարային կը նայէր . Գետ-
 րուտա Գլարան միշտ կը դուռէր ու իր ազի-
 կըն անուանելէ չէր գաղթէր : Օրը տարածա-
 մելու կը սկսէր . Եւ Գլարային ըսուեցաւ որ ե-
 թէ կը հաճի , սենեակ մը քաշորի , որպէս զի
 հետեւեալ օրը ճամբայ ելլելու կարող ըլլայ :
 Գլարային չքեղ կարստիններով զարդարուած
 սենեակ մը ցուցուեցաւ : Գլարա որ մօրը տու-
 նը եղած ատենը զեղայւոյ տնակներէ ուրիշ-
 բան տեսած չէր , այնչափ չքեղութիւն . Եւ
 զեղստիւն տեսնելով աղջեցաւ : Եղր տան-
 ձին մնաց , սկսաւ ամեն բան խնամով դիտել :

քանզի այն բնակարանին մէջ անոր ամեն բան
 նոր էր, եւ ամեն տեսածն՝ անոր գեղեցկու .
 թեան վրայ ունեցած զաղափարէն վեր ու տ-
 ւելի էր: Հետաքրքրութեան առաջին վախու-
 քը հաճեցընելէ ետքը, Գլարա միտքը դրաւ
 Աստուծոյ այն յայտնի պաշտպանութեանը հա-
 մար շնորհակալ ըլլալ. քանզի աս երկու ան-
 դամ' էր որ օդնութիւն կը գտնէր, երբ օդնու-
 թիւն գտնելու բնաւ յոյս շունէր: Ուստի Բարձ-
 րելոյն իրեն ըրած բարութեանն ապացոցները
 տեսնելով՝ վսահութիւնն անոր վրայ կ'աւել-
 նար: Արդ ազօթքի կայնեցաւ, սրտի չերտ
 եռանդով իր փրկութեանը համար գոհութիւն
 կը մատուցանէր: Բայց սրտին մէջ տակաւին
 տիսրութիւն կը դգար, քանզի զիտէր թէ իր
 կորսուելուն վրայ մօրը սիրոը մեծ կոկծի մէջ
 էր. եւ արդարեւ ան թշուառ կինն իր զաւ-
 կին անհետ ըլլալուն վրայ արդեօք ինչեր կը
 մտածէր. անտարակոյս արտասուօք եւ ցաւօք
 հանդերձ երկար ատեն անոր զալստեանը ըս-
 ոլասած էր: Թէպէտ Գլարա ասոնք մտածե-
 լով կը վշանար, բայց հետեւեալ օրը մայրը
 աեսնելու յոյսն անոր այս վիշտը բաւական կը
 թեթեւցընէր: Վերջառէս քնացաւ քաղցր վրա-
 տահութեամբ թէ շուտով իր ներկայութիւնը
 մայրը միսիթարելու կարող պիտի ըլլայ:

Գլարա տուառուն կանուխ արթնցաւ . քանզի կ'աճապարէր մօրն երթաւ որուն քով կընար աւելի հանգիստ վայելել . եւ ինչպէս որ քընացած ատենն իր վերջին մտածութիւնը մօրը փրայ էր , անանկ ալ արթնցած ատենն առաջին խորհուրդը մայրն եղաւ : Մայր , կ'ըսէր , սիրելի մայր , քեզ դաշձեաւ պիտի տեսնեմ , եւ քեզ բաղկացու մէջ պիտի զգուեմ . քու բոլոր կոկիծներդ պիտի վերջանան . քանզի քու աղջիկ քեզի պիտի զատնայ : Խեղճ աղջիկը չէր զիտէր թէ ան զօր իւր ազատիչը կը կործէր , անզգամ յափշտակիշ մ'էր , որուն աւազակաց հետ ըրած կոիւը կեղծեօք էր , եւ այս խորամանկութիւնը գործածած էր , որուէս զի այս միջոցով աղջկան վատահութիւնը կարենայ գըրաւել : Այն նենգաւոր Գեղրատան որուն համար կըսէր թէ իւր մօրաքոյը է , օտար կին մ'էր որ ոսկոյ մեծ զումար մը ընդունելու համար անոր այն ձեռնարկութեանը մէջ օդնական ըլլալու յանձն առած էր : Երկար ժամանակէ ՚ի վեր ասպետն այս յափշտակութիւնը ընել կը խորհէր . ուստի այսպիսի առթի մը շատոնց փափաքած ըլլալով , անհնարին էր որ աղջկան ազատութիւն շնորհելու հաւանէր : Ուստի Գլարա . վոխանակ վտանգէ ազատուած ըլլալու , ընդհակառակն , ամեն պաշտպա-

նութենէ զուրի , մեծ վտանգի մէջ կը դանք .
 էր : Գեղրուտ ստուռուն խորհելով թէ
 Գլորա արդէն արթնցած է , անոր սենեկին
 դուռը զարնելու գնաց : Գլարա շուտով դուռը
 բացաւ . Եւ անոր ըստ թէ շտանց է որ արթուն
 է , եւ վար իջնել կը փափաքի , բայց զզիկին
 ընտեղացը սովորութիւնը չդիտնալուն համար ,
 աւելի պաշշաճ համարած էր կենալ մինչեւ որ
 մէկը զինքը կանչելու դայ : Գեղրուտա առջի
 երիկուան պէս՝ աղջկան հետ ողոքանօք խոռե-
 ցաւ , եւ 'ի միտին նախաճաշ ընելու տարաւ :
 Ճաշի առեն՝ Գեղրուտա աղջկանն ըստ թէ
 ասպետն աւաղակաց հետ կառած առենը վէրք
 մը առած է . ուստի եթէ անոր երախտագէտ
 է , աս վէրքին համար պէտք է որ անոր նե-
 րողամիտ ըլլայ , մանաւանդ որ վիրաւորումն իր
 պատճառաւ եղաւ : Հաղիւ թէ այս խոռակցու-
 թիւնը լմնցած էր , ասպետը ներս մտաւ . Գը-
 լարային խիստ մեծ ընդունելութիւն ըրաւ .
 Եւ անոր ողոքանաց խոռքեր ըսելէ չդաղըե-
 ցաւ , անոր վրայ միշտ մեծ խնամք կը ցուցը-
 նէր : Խոկ ճաշէն ետքը , մօրը տունը երթալու-
 վրայ այնպէս խոռեցաւ որպէս թէ շուտով պի-
 տի կատարուէր . Եւ անոր մեկնելուն վրայ եր
 ցաւն յայտնելով ըստ թէ ինք եւ մօրաքոյրն
 ամայի պիտի մնան , քանզի այնուհետեւ իրենց

միայնութիւնն ալ ովկարոզ պիտի ըլլայ չենցնել։
Այս դղեկին մէջ քու ներկայութիւնդ , կ'ը-
սէր , պիտի ըլլայ ինձի համար արդարեւ ե-
րազի մը պատկերը , երջանիկ , բայց , բարէ ,
կարճատեւ երազի մը : Բայց որովհետեւ կը
մեկնիս , գոնէ ինձի սայոյսը տուր թէ ինձի
համար անդարձ կերպով կորուուծ պիտի չը-
լաս : Գլարս այս խօսքերուն շնորհակալ կ'ըլ-
լար . ճաշէն ետքը՝ երբ սկսաւ ճամբայ ելլելու
պատրաստիլ , Գեղրուտա դադրեցոց զնս .
սկսաւ անոր տոջեւը զնել այն ամեն վտանգ-
ներն որ աւազակուտ անտառէն անցնելու ա-
տեն դարձեալ անոր կրնար պատահիլ , ինչ-
պէս որ առաջին անգամ սրատահեցաւ : Կ'ըսէր
թէ ճամբայներն ապահով չեն . եւ թէ աս խոր-
հուրդը որ կուտայ՝ զինք ոիրելուն համար է .
քանզի մեծ վարանաց մէջ պիտի ըլլայ եթէ
այն վտանգաւոր ճամբարդութիւնն ընելու թու-
զու . ուստի կը ստիպուէր որ , գոնէ մօրը սի-
րոյն համար , քիչ մը ժամանակ ոլ դադրի ,
մինչեւ որ վտանգէ ազատ ընազ ամեն միջոց
մտածուի :

Ասակեաը մեծ վարանման մէջ կ'երեւէր : Գեղ
մօրդ դարձնելու խոստացայ , ըստ , կենացս
վտանգ մը հասնելը զիտնալու ալքլամ , ոկտք
է որ խոստամ կատարեմ :

Գեղրուտա ասպետին ըրած որոշմանը վրայ զարհութել ձեւացուց , եւ Գլարան ստիպեց որ ասպետն իր խոսքունքը կատարելէ ազատ ընէ : Առանց ապերախտ գտնուելու , կ'ըսէր , չես կրնար Հաւանիլ սր կատարէ այնսկիսի խոսում մը որմէ կենացը կորոսոը կրնայ յառաջ դալ : Մեծանձն եղիր , որդեակ , քեզի ըրած աղաչանացս մտիկ ըրէ , կարող է Աստուածքեզի փոխարէնը տալ :

Գլարա միշտ աչքին առջեւն ունէր մօրը տասպանքը . ուստի մէկ կողմանէ որդիական սէրը , միւս կողմանէ երախտադիտութիւնն , անոր սրտին սոսկալի պատերազմ մը կուտային : Զէր զիտէր թէ ինչ որոշում ընէ . քանզի ասպետին եւ Գերդրուտային նենդաւոր խօսքերն անոր հաւացուցած էին թէ փրկութեան պատճառն իրենք են : Վերջապէս , Գերդրուտա առաջարկեց որ սպասաւորի մը ձեռքով մօրը լուր տրուի , եւ սրատգամաւորն աւազակներուն վտանգէն ապահով ընելու համար , կ'ըսէր թէ գեղացւոյ ծալտեալ կերպարանքովը պատգամաւոր երթայ , ու մօտաւոր դղեկէ մը խումբ մը զինեալ մարդիկ հետ առնելով՝ այնպէս Գլարային մօրը տունը հասնի :

Գլարա չէր զիտէր թէ ինչ ըսէ , ուստի մեծ վարանման մէջ էր , եւ կարծելով թէ արդա-

թեւ Երախստագէտ ըլլալ կը պարտաւորի անոնց
որոնց իր նենդաւոր յափշտակիչներն ըլլալը
չէր գիտեր : Գերդրուտային առաջարկութեանը
հաւանութիւն տալու որոշեց , ուստի եւ մնա-
լու հաճութիւն տուաւ . միայն կ'աղաչէր որ
մօրը լուր մը հասցնելու փութան . քանզի կը
վախնար թէ այս թշուառ կնկանը կսկիծն
աւելնալով իր բացակայութեանը վրայ , որուն
պատճառը մօրը ծանօթ չէր , գուցէ անոր կե-
նացը վտանգ մը պատահի :

ԶԳԼարա խարելով թէ մօրը լուր տալու հա-
մար արդէն պատգամաւոր զրկուեցաւ եւ , իբր
թէ պատգամաւորին գալուն կը սպասեն որ
ունոր հանդիստ ըլլալուն լուրն առնեն , այս
միջոցին ամեն ջանք ըրին որ Գլարան զբաղե-
ցնեն : Ասպետը ցորեկուան տաեն անոր իր պա-
տերազմերուն պատահարները կը պատմէր ,
եւ իր արշաւանացը կամ Օուրնուա՝ կոչուած
խաղերուն մէջ ըրած քաջութիւններուն վրայ
կը խօսէր . նաեւ դղեկին մէջ տուած խնջոյք-
ներուն պատմութիւնը , որոնց բոլոր շրջակայ-
տեղերուն ազնուականները հրառիրուած էին :
Վերջապէս , զԳլարա կամաց կամաց զուարթա-
ցընելու եւ անոր անձկութիւնը փարատելու
կը յաջողէր : Իսկ գիշերները նուագածութեամբ
իր կիթառին ձայնովը քաղցրանուագ երգեր

նուագելով, մէկ խօսքով ամեն ջանք ընելով
կեղծեալ պատգամաւորին ուշանալը՝ խեղճ
աղջկանը մոռցնել տալու կ'աշխատէր: Գլարա
երաժշտութիւնը կը սիրէր, եւ բնաւ բան մը
զինք այնշափ չէր զուարձացներ որչափ աս-
պետին սքանչելի կերպով կիթառ հարկանելը:
Ինք ալ Գլարա քաղցր ձայն մը ունէր, բայց
հօրը վիճակը չներելով որ անոր երաժշտու-
թիւն սովորեցնէ, անոր ձայնը սուրբ տաղեր եր-
գելու վարժեցնելով միայն շատացած էր: Աս-
պետն աղաչեց որ երգէ, ան ալ թէպէտ ա-
մօթխած էր, ասպետին թախանձանքէն յաղ-
թուելով սկսաւ երգել:

Ատալսդան շատ զարմացաւ, երբ այս քաղ-
ցըր ձայնը լսեց, եւ սկսաւ անոր քաղցրութեա-
նը եւ կակղութեանը վրայ գովեստներ տալ.
ձայնդ, ըսաւ, սրտառուչ է: ուստի մեղք է
որ սյսպիսի ծիրքեր առանց մշակութեան մը-
նան: ուստի եւ սկսաւ յորդորել որ քանի մ'օր
աւելի կենայ: Քանզի կը յուսամ թէ, կ'ըսէր,
քիչ ատենուան մէջ կրնամ քեզի սորվորեցնելոր
կիթառ հարկանելով երգես: Գլարա նուագարա-
նը հարկանելու փորձ մ'ընելով, երբ տեսաւ թէ
կը յաջողէր իր երթալն ուշացնելու հաւանեցաւ:
Խեղճ աղջիկն առանց կասկածելու իր յափշտակ-
չին հնարագիտութեանը տեղի կուտար, ան

ալ ուրախ կ'ըլլար տեսնելով թէ իր խորհուրդ-
 ները կը յաջողին . Եւ զԳլարա արդէն իրենը
 եղած կը համարէր : Փոխանակ անպետին նեն-
 գութեանը վրայ կասկածելու, անոր մարդասի-
 րութեանը վրայ կը զարմանար , եւ իրեն ցու-
 ցըցած խնամքը կիրթ քաղաքավարութեան
 մ'արդիւնքը կը կարծէր : Իսկ Գերդրուտային
 սիրոյն վրայ այնպէս համոզուած էր , որ կը մը-
 տածէր թէ անկէ ինչպէս պիտի բաժնուի ,
 քանզի կը խորհէր թէ սաստիկ կոկիծ պիտի
 զգայ , եթէ իրմէ զուրկ մնայ , իրմէ զոր այն-
 չափ կը սիրէր : Երախտագիտութեան այս
 պարտքերը զԳլարա կը շիռթէին : այնպէս որ
 բաւական ժամանակ չկրցաւ իմանալ այն վատ
 մատնութիւնն որուն զոհ ըլլալու վտանգի մէջ
 էր , եթէ Աստուած անոր վրայ շհսկէր : Երբ
 իրիկուան սենեակը կը մտնէր , Տէրոջը կ'աղա-
 չէր որ պաշտպանութիւնն իւր վրայէն պակաս
 չընէ եւ աղատիչներն ալ օրհնէ : Սակայն քիչ
 քիչ Գլարա ասպետին իրեն ցուցըցած խնամք-
 ներուն վրայ կասկածել սկսաւ . Եւ երբ առան-
 ձին իւր շքեղ սենեկին մէջ կը մտածէր թէ իր
 հոն գացած օրէն 'ի վեր ինչեր անցան , տա-
 րակուսանաց մէջ կ'իյնար , թէ արդեօք ար-
 դարեւ պաշտպանաց ձեռք ինկած է :

Ուստի երկիւղն սկսաւ անոր սրտին մէջ տի-

ըԵԼ. Եւ ան ատեն իմացաւ թէ , եթէ անոնք
իրաւ իր պաշտպաններն ըլլային , շատոնց իր
մօրը տունը գացած պիտի ըլլար , ուստի եւ
հասկցաւ թէ ասպետը հնարքով անոր երթալը
Կ'ուշացնէր : Աս խորհուրդներն անոր միտքը
քոլորովին ու սաստիկ գրաւեցին այնպէս որ
ալ որոշեց որդղեակը թողու եւ մօրը տունն եր-
թայ : Կը զղջար թէ ինչու համար քանի մ'օր
աւելի կենալու հաւանութիւն տուաւ , բայց այն
բնակութենէն աղտտելու ժամանակը տակաւին
եկած չէր . կրելու դեռ ուրիշ խիստ փորձեր
ունէր :



ԳԼՈՒԽ Գ.

Գլարա իոնադ ժողովը էը էր :

Թէսէտ Գլարա արդէն կասկածներ ունեցաւ, բայց միշտ կը խաբուէր երբ կը տեսնէր որ խորամանի Գերդրուտան իրեն այնչափ սիրոյ նշաններ կը ցուցնէ, եւ գրեթէ ցաւ կ'իմանար իր պաշտպաններուն դէմ ունեցած խորհուրդներուն համար, որոնք գէշ խորհուրդներ կը կոչէր : Օր մը Գերդրուտա սովորականէն կանուխ Գլարային սենեկին դուռը զարնելու եկաւ, ըսելով թէ քեզի շատ մեծ ուրախութիւն մը պատճառելու համար կուգամ, Գլարա աճապարանօք դուռը բացաւ, եւ հարցուց թէ ինչ է ուրախութիւնը զոր իրեն պատճառել տալ կը խոստանայ : Գերդրուտայ գոգնոցին տակէն փայլուն անդամանդներով լեցուն տուփեր հանեց, Գլարա ասոնք տեսնելով ապշած մնաց . քանզի իր պարանոցէն կախուած փոքրիկ ոսկիէ խաչէն 'ի զատ երբէք այսպիսի գեղեցիկ գոհարեղէններ տեսած չէր : Գերդրուտա աղջկան ասլիլը դիսլող տոփթ համա-

ըԵԼՈՎ սկսաւ զնա ստիպել որ սուփերուն մէջի
 եղածները փորձէ : Գլարա քաղաքավարու-
 թեամբ ընդունեց . նենգաւոր գերդրուտան
 աղջկան ըստ թէ այսուհետեւ այս աղամանդ-
 ները քուկդ են . եւ աղաչեց որ իր կողմանէ
 իբրեւ յիշատակ զանոնք ընդունելու հաճի . Գլ-
 արա թէպէտ անսպաճոյն սնած էր , բայց դեռ
 մանուկ եւ անփորձ ըլլալով ընդունեցաւ , ա-
 ռանց խորհելու ան հետեւանքներուն վրայ ո-
 րոնց իր աս անզգուշութիւնը պատճառ կըր-
 նար ԸԼԱԼ : Հետեւեալ օրը բերին փառաւոր
 զգեստներ որոնք առջի օրուան զարդերուն
 կրնային վայլել : Գլարային զարմանքը կը
 յաճախէր , ինքզինք այսպէս զարդարուած
 տեսնելուն վրայ մեծապէս աւրախ կ'ըլ-
 լար : Մայրս արդեօք որչափ պիտի ուրախա-
 նայ , կ'ըսէր , երբ զիս այս վայելուչ զարդե-
 րով տեսնէ : Խեղճը պարզամտութեամբ իր
 առջեւը լարուած թակարթները չէր տեսներ .
 Ասոլետին զարմացումն ալ շատ մեծ եղաւ ,
 երբ Գլարա այսպէս զարդարուած տեսաւ ,
 աղջկան կ'ըսէր թէ , երբէք անկէ գեղեցիկ մէ-
 կը տեսած չէ , եւ թէ անոր գեղեցկութիւ-
 նը , եւ վայելուչ կերպարանքը հիանալի են
 ուստի սէրն աւելի բորբոքեցաւ եւ որոշեց որ
 ինչ որ ըլլայ , բնաւ զնա չթողու , քանզի Գլ-

լարան միայն կորսնցունելու համար կը սիրէր .
Եւ բոլոր խորհուրդներն այն վատ նպատակին
հասնելու համար էին : Երբ այնուրախութեան
արբեցութիւնն անցաւ , Գլարա սթափեցաւ .
Եւ իր կասկածներն անոր մտքին մէջ աւելի
զօրացան , այնպէս որ իր անզգուշութեանը
վրայ դառնապէս զղջաց , եւ շուտով իրեն տըր-
ուած հանդերձները հանեց , որոնք 'ի սկզբան
անոր այնչափ հաճութիւն պատճառած էին ,
որ զանոնք հազնել յանձն առած էր : Այնպէս
վայրկեան մը իր սպարտաւորութիւնները մոռ-
ցած ըլլալուն համար ո՞րչափ կ'ամչնար : Արդ
ան զարդերն ետ զրկեց , քանզի անոր սոսկում
պատճառելու սկսած էին , եւ առաջադրեց որ
այնուհետեւ զգոյշ ըլլայ :

Ասպետը , որ դեռ այս փոփոխութեանը
տեղեակ չէր , իր խորհուրդներուն յաջողու-
թեանը վրայ կ'ուրախանար , եւ Գլարային հետ
բռնած ընթացքին կը հաւնէր . բայց յանկարծ
եկան անոր իմացնելու թէ աղջիկն ընծաները
ետ կը զրկէ եւ կ'ըսէ թէ այսուհետեւ ասպե-
տէն ինչ որ իրեն տրուի , չպիտի ընդունի : Աս-
պետն աս լուրն առնելով շատ վշտացաւ . այն
վայրկենին որ յաջողութիւն գտած կը կար-
ծէր , տեսաւ որ ընդհակառակն իր բոլոր խոր-
հուրդներն եղծան : Սակայն բոլորովին չյու-

սահատեցաւ, եւ որոշեց որ աս փոփոխութիւնը գետրուտային իմացնէ : Ուստի անիկա կանչել տուաւ : Գետրուտայ ասպետին քով կուգայ, եւ խաբեթայ մարդոց սեպհական եղող շողոքորթութեամբ ինք զինք ամեն հրամանին պատրաստ կը ցուցնէ : Ասպետն անոր կ'իմացընէ համառօտիւ ինչ որ պատահած էր . Վերջապէս միաբան սկսան խորհելթէ ինչ հնարքով աղջկան դժկամակութիւնը յաղթել կարելի է :

Որոշուեցաւ որ կեդրուտա արդէն աղջկան տրուած ընծաները նորէն՝ անոր զրկէ, յետոյ ինք անձամբ երթալով համոզէ որ զանոնք ընդունելու հաճի, Դարձեալ հասկնայ թէ ինչ պատճառաւ . Գլարա զանոնք մերժել կ'ուզէր : Գլարա հաստատութեամբ կը պնդէր թէ իւր անպաճոյծ հանդերձներն իրեն տրուին : Գետրուտա 'ի զուր աղաչեց որ ասպետին ըրած ընծաներն ընդունի . Գլարա միշտ դէմ կեցաւ : Ան ատեն խորամանկ կինը, Գլարային ամեն յոյսն 'ի դերեւ հանելու համար Գլարային ծառայող աղախինը կանչել տալով անոր ըստ թէ ասպետին հրամանն է որ Գլարային գծուծ հանդերձներն անոր արուին . Ապաստոր աղջիկը պատասխան տուաւ թէ զանոնք իրեւ անպիտան աղքամ աղջկան մը տուած էր որ իրմէ

ողորմութիւն խնդրելու եկած էր : Այս ըսելով
գետրուտա կեղծեօք բարկանալով սկսաւ ա-
ղախինը յանդիմանել թէ իրեն չվերաբերող
բաներն ինչպէս ուրիշի տալու կը համարձակի :
Խեղճ աղախինը որչափ կը ջանար զինք ար-
դարացնել նոյնչափ գետրուտայի բարկութիւ-
նը կը բորբոքէր մինչեւ սպառնացաւ թէ պիտի
վանէ . յետոյ արհամարհանօք Գլարան թողուց
ու մեկնեցաւ :

Գլարա տխուր եւ մտախորհ էր . ուստի դը-
ղեկին մէջ իր վիճակն անտանելի էր , այն ա-
տենէն 'ի վեր որ ասպետին իրեն վրայ ունե-
ցած դիտաւորութիւնը հասկցաւ : Դարձեալ
թախանձանօք խնդրեց որ մօրը տունը տարուի.
եւ կ'ըսէր . թէ ինք այլ եւս երկար ատեն հոն
մնայ , պատճառ պիտի ըլլայ որ մայրը հոդէն
մեռնի : Ասպեաը պատգամաւորներ զրկեց որ
երթան նային անտառն ապահով է . անոնք ետ
դարձան ըսելով թէ ապահով չէ , եւ թէ ամեն
օր նոր նոր աղետալի դէսլքեր կը պատահին ,
եւ թէ քիչ մը ժամանակ ոլ եթէ սպասելու
ըլլան խոհեմութիւն ըրած կ'ըլլան : Ասպետն
այս պատճառանքն արդէն անգամ մը դոր-
ծածեց , եւ անոր յաջողելուն համար ալ մի
միայն միջոցն առ էր . բայց մօտեցած էր ատե-
նըն ուր Գլարա անոնց խարեբայտթիւնը պի-

տի հասկնար : Ուստե ասպետը տեսաւ որ յա-
 ջողելու համար անոր հետ աւելի համարձակ
 վարուիլ պէտք է : Գլարա կը տեսնէր որ աս-
 պետին վարմունքը կը սկսէր համարձակ ըլլալ,
 եւ իրեն հետ առաջուան պէս ակնածութեամբ
 չէր խօսէր : Վերջապէս աղջկան երկիւղը կ'ա-
 ւելնար քանզի չէր գիտեր թէ ուստի օդնու-
 թիւն խնդրէ : Ասպետը ստէպ սիրոյ վրայ կը
 խօսէր եւ կ'ըսէր թէ շատ երջանիկ պիտի ըլ-
 լար եթէ անոր հետ ամուսնանալու կարող ըլ-
 լար . իսկ Գլարա որ անոր խորհուրդները իմա-
 ցած էր , անոր խօսքերուն ամենեւին հաւատք
 չէր ընծայեր : Անոր հետ վարուելու կերպե-
 րուն մէջ այնչափ քիչ յարդանք կը տեսնը-
 էր դէպ ՚ի Գլարա , որ աղջիկը չէր կրնար
 հասկնալ թէ ասպետը զինք իրեն ամուսին ը-
 նելու գիտաւորութիւն ունի : Ասպետին եւ Ռօ-
 տոլֆին մէջ տեղը որչափ տարբերութիւն կար :
 Ասպետը զԳլար մօրմէն կը հեռացնէր եւ դը-
 ժոխային խորամանկութիւններ գործածելով
 հրապուրելու կը ջանար . ուր Ռօտոլֆ , լի հը-
 լութեամբ եւ մեծարանօք , երբէք աղջիկն իր
 պարտաւորութենէն խոտորեցնել վործած չէր :
 Երկուքին մէջ եղած տարբերութիւնը սկսաւ
 Գլարային դառնութեամբ յիշել տալ այն ուխ-
 տը զոր Սուրբ կոյսին ըրած էր թէ այլ եւս

Բօսոլիք չտեսնէ . հիմա սկսաւ ճանչնալ թէ բօ-
 տոլիք իր սիրոյն յիրաւի արժանի էր : Բայց Գը-
 լարային կասկածելի էր ոչ միայն ասպետն, այլ
 եւ Գետրուտայ, քանզի աղջիկը հասկցաւ թէ
 աս կինն ալ զինք խարելու կը ջանայ : Այնու-
 հետեւ դղեակն իրեն սոսկալի բանտ մ'եղաւ .
 Եւ երախտագիտութեան զգացումները զոր քա-
 նի մ'օր առաջ իրեն պարտք կը համարէր, հիմա
 ատելութեան փոխուեցան այն նենգաւորնե-
 րուն դէմ որոնք զինք այսպէս չարաչար խա-
 բած էին : Ակսաւ միտքը բերել Գերդրուտային
 իրեն հետ վարուելուն բոլոր պարագաները, եւ
 բոլոր յիշածները զինք կը հաստատէին այն
 կարծեացը վրայ թէ այս կինն ալ իրեն մատ-
 նիչ է : Այսպիսի չարամիտ մարդոց մէջ գըտ-
 նլուելուն համար յուսահատած, որոշեց որ այլ
 եւս սենեկէն դուրս չելլէ, այլ հոն մնայ մին-
 չեւ որ զինք մօրը տանել ուղեն : Այսպէս տը-
 խուր խորհուրդներու մատնուած Աստուծոյ
 գիրկը կ'ապաւինէր . աղօթք կ'ընէր, եւ ա-
 ղօթքը անոր քաջալերութիւն կուտար, կ'ըզ-
 գար որ նորէն զօրութիւն կը ստանայ, ուստի
 եւ աւելի համբերութեամբ իր տխուր վիճակին
 կը հանդուրժէր :

Թէպէտ Գլարա զինք այնպէս առանձնու-
 թեան տուաւ, բայց եւ այնսպէս առաւօտ մը

Համարձակեցաւ պարաէզ իջնել, որ ըիչ մը օդ
 առնէ : Այն ինչ վարդ մը բրցուցած էր, երբ
 տեսաւ որ գղեկին վերակացուն իրեն մօտեցաւ
 եւ վայրկեանի մը չափ հետը խօսել ուզեց :
 Այս խօսակցութեան նպատակն էր աղջկանն
 իմացնելթէ իրեն որոգայթներ լարուած են :
 Քու վիճակիդ վրայ շատ կը ցաւիմ, եւ քեզ
 ազատելու համար ամեն բան պիտի ընեմ. մի-
 այն կ'աղաչեմ որ քու իսկ օդտիդ համար մար-
 դու չըսես ինչ որ քեզի խօսեցայ, քանզի թըշ-
 նամիներու մէջ կը դտնուիս, որ զիրենք եր-
 ջանիկ պիտի համարին եթէ քեզի վնաս հաս-
 ցնելու կարող ըլլան : Ի վերջոյ ստիպեց որ
 կերդրուային ալ վստահ չըլլայ . իմացուց թէ
 այն կինն ասկետին մօրաքոյրը չէ, այլ խա-
 բերայ մը որ արծաթի համար միայն ասկետին
 կը ծառայէ : Գլորա առ կարեկից մարդէն բաժ-
 նուելուն պէս, իր սենեակը գնոց եւ մինչեւ
 առաւօտ արտաստելէ չդադրեցու, քանզի
 սոսկալով տեսաւ թէ իր կասկածները դժբախ-
 տարար ճշմարտութիւն են : Ազատելու համար
 շատ կերպեր կը մտածէր, վերջասկէս ամբողջ
 գիշեր մը մեծ տառապանօք անքուն անցնելէ
 ետքը, խորհեցաւ որ ամենէն լաւ կերպն՝ ա-
 ռանց մէկու մը իմացնելու թողուլ երթալն է,
 Արդ երբ վար իջնելու կը պատրաստուէր պա-

տուհանէն տեսաւ որ դղեկին գաւիթը քանի
 մը մարդ կը մտնէ , եւ ճանչցաւ թէ զինքյա-
 փշտակող մարդիկն են : Աս տեսնելով յետին
 աստիճան սոսկաց : Ի՞նչ կրնար ընել , կամ ի՞նչ
 պիտի ըլլար . այն մարդիկը զինք տակաւին
 հալածելու կու գային : Սրտին տաղնապն ան-
 հնարին էր՝ ալ չէր գիտեր թէ ինչ հնարք
 գտնէ : Փախչել այլ եւս չէր կրնար , քանի որ
 դղեկին մէջ ամեն մարդ ոտքի վրայ էր , եւ
 վախչիլն անշուշտ սկիտի տեսնուէր : Երբ այս-
 պիսի խորհուրդներով կը տառապէր , յան-
 կարծ ասպետը ներս մտաւ : Գլարա սաստիկ
 զայրացաւ , քանզի ասպետին աս յանդդնու-
 թիւնը Գլարային համար նոր եւ անլուր էր ,
 Ռւստի ասպետին ըստ . Ասպետ , անմե-
 ղութեան ապաստանարանը պղծելու ինչպէս
 կը համարձակիս . կը կարծես թէ 'ի սպառքու
 իշխանութեանդ տանկն եմ . հիւրնկալութեան
 իրաւունքովը կը զեղծանիս : Այսպիսի արհա-
 մարհանացդ արժանի ըլլալու համար ինչ ըրած-
 եմ : Աս վերջի գործդ՝ քու ինծի հետ մինչեւ
 հիմա վարուելուդ նսլատակը յայտնի կ'ընէ ,
 եւ կը տեսնեմ թէ եթէ հոս մնամ , առաքինու-
 թիւնս մեծ վտանգներու նշաւակ պիտի ըլլայ .
 բայց բոլոր վստահութիւնս Աստուծոյ վրայ դը-
 րած եմ . ան իմ վրաս կը հսկէ . եւ զիս չի լը-

քաներ : ինչու համար զիս մօրմէս յափշտակ
 եցիր , ինչ պատճառաւ անիկա իր զաւկէն զըր-
 կեցիր . ես անոր քով երջանիկ կ'ապրէի , եւ
 դու անոր խանդաղատանքէն զիս յափշտակե-
 ցիր այս դղեկին մէջ բանտարկելու համար ուր
 քու թշնամանացդ նշաւակ եմ : Ասպետ , քու
 վարմունքդ օրինաւոր աղնուականի մը վայե-
 լուչ վարմունքէն օտար է . քեզի եկուր . խղճ-
 մտանքդ քեզ չի յանդիմաներ . Ո՛հ , աղնուա-
 գոյն զգացումներու դարձիր , հաւատա որ
 մտքիս մէջ քու ստրջանացդ յիշատակը միայն
 պիտի մնայ . Եթէ այս վայրկենիս մայրս հոս
 մօտ ըլլար , ինչ պիտի ըսէր . որչափ պիտի
 կշտամբէր զքեզ որ զինք զրկեցիր իր զաւկէն
 որ անոր ծերութեանը նեցուկ ու մխիթարու-
 թիւն էր . Այսպիսի ատելի դործի մը համար
 ինչպէս կարող պիտի ըլլայիր զքեզ արդարացը-
 նել . աս գործը քեզի երբէք կրնայ ներուիլ .
 ՈՎ մայր իմ , Երբ քեզ նորէն պիտի տեսնեմ ,
 Երբ հանդարտութեամբ քու առաջիկայութիւնդ
 պիտի վայելեմ . բոլորտիքս եղող ամեն բան
 զիս կը մատնէ , ու միայն իմ դժբախտութիւնս
 կ'ուզէ . դու միայն , ով դորովագութ մայր ,
 կը սիրես քու զաւակդ , եւ անտարակոյս հի-
 մա աղջկանդ կորստեանը վրայ դառն արտա-
 սուք կը թափիս . բայց շես զիտեր թէ աղ-

զիկդ ինչ աստիճան նեղութեան մէջ է . ով
սլիտի կրնայ քեզի իմացնել թէ անոր որչափ
տառապանք կը տրուի, թերեւս տակաւին չեռ
գիտեր թէ ինչ եղած է . եւ թէ արդեօք անոր
յախտակիչները յաւիտեան սլիտի զրկեն ըզ-
նա քուքովդ ըլլալու երջանկութենէն : Գլարա
Ատալսդանին դառնալով , Ասպետ , ըսաւ ,
տակաւին այս սենեկիս մէջ կենալու ինչպէս
կը համարձակիս . յուսահատութիւնս կը տես-
նես , եւ չես գտներ այսպիսի խորին վիշտ մը
հանդարտեցնելու համար սրտիդ մէջ մխիթա-
րական խօսքեր : Այդպէս չարաչար վարուելուդ
ինչպէս չես զղար . գնա , քաշուէ , զիս ա-
ռանձին թող որ տառապանքս փարատեմ ,
քանզի քու առաջիկայութիւնդ իմ վիշտերս
կ'աւելցնէ :

Գլարա այս խօսքերն ասպետին ըսած ատե-
նը , ասպետը ոտքի վրայ կայնած լուսութեամբ
անոր կը նայէր , եւ այնպէս կը թուէր թէ Գլ-
լարային համօղումը վոխելու համար հնարքներ
կը փորձէ :

ԵՐԲ Գլարա խօսելէ դադրեցաւ , ասպետն
անոր մօտենալով այս խօսքերն ըսաւ , իմ դի-
տաւորութեանցս անկեղծութեանը վրայ քեզի
ով կրցաւ կասկածել սալ . ես քեզի համար
միշտ այն նկատումներն ունեցայ ինչ որ վա-

յԵԼՅՈՒԹԻՒՆՆ ու քու առաքինութիւնդ կը պա-
 հանջեն . ճշմարիտ է թէ քեզ իմ քովս պա-
 հելու համար շատ հնարքներ գործածեցի բոյց
 հաւատա որ քու վրադ ունեցած սիրոյս հա-
 մար էր : Քեզ տեսնելուս պէս , սիրեցի . եւ
 քեզ իմ քովս հաստատելու համար ինչ հնարք
 որ կարող էի գործածել գործածեցի : Իմ դի-
 տաւորութիւններս արդէն հասկցած ես , շատ
 անդամ քեզի ըստ եմ թէ որչափ երջանիկ
 պիտի ըլլամ եթէ ինծի ամուսին ըլլալու հա-
 ւանիս . եւ դու զիս միշտ մերժեցիր . ուստի
 մտածէ , գեղեցիկդ Գլարա , այն երջանիկ վի-
 ճակը զոր պիտի վայելէիր : Բոլոր ստացուածս
 եւ զիս ոտուըներուդ առջեւ կը դնեմ . իմ բո-
 լոր ունեցածս քուկդ պիտի ըլլան , եթէ զիս
 քեզի ամուսին ընդունելու հաճիս . փոխանակ
 այս թշուառութեան որուն մէջ միշտ ասլրած
 ես , փոխանակ այդպէս հեքութեամբ ապրե-
 լու , զեղխութեան եւ ընչաւետութեան մէջ
 պիտի ըլլաս : Պալատ մը զեղեցկացնելու համար
 ծնած ես . քու վայելչութիւնդ , քու խելքդ ,
 վերջապէս քու վրադ ամեն բան միթէ ամե-
 նէն բարձր աստիճանի արժանի չէ . զիս մի
 մերժեր , ովք Գլարա , իմ այս վշտիս կարեկից
 եղիր : Եթէ գիտնայիր թէ քու առաջիկայու-
 թիւնդ ինծի որչափ հարկաւոր է , եթէ գիտ-

նայիրքեզ որչափ կը սիրեմ, անշուշտ իմ վըւ-
տացըս պիտի գթայիր : Ուրեմն աղէկ մտածէ .
Եթէ իմ առաջարկութիւններս ընդունիս, պիտի
ըլլաս թագուհի այս դղեկին մէջ, որուն վրայ
քանի մը օր առաջ այնպէս կը զարմանայիր :
Այս ընդարձակ կանանչագեղ անտառները եւ
բոլոր մարգագետիններն որոնք անտառներուն
բոլորտիքն են, իմ ստացուածս են : Այսպիսի
ընչաւէտ ապագայ մը ոչ ասլաքէն քու այժմու
աղքատութենէդ աւելի է : Կ'աղաչեմ, պա-
տասխան տուր, լութեամբ զիս մի այսպէս
յուսահատեցներ :

Ինչ որ ինծի կ'առաջարկես, ըստ Գլարա,
վառասէր անձմը կրնար թերեւս հրապարել .
բայց ես, որ միշտ պարզութեան մէջ սնած
եմ, ես որ այն խոնարհեւ աշխատալի կեան-
քիս մէջ այնչափ ուրախութեն գտած եմ, ին-
չու համար զայն ամօթակի վատանուն կեանքի
մը հետ փոխել ուզեմ, վատ անուն մը ժա-
ռանգելու համար ինչու հաճիմ իմ յարգելի
մայրս թողուլ : Ոչ, կը մերժեմ քու առաջար-
կութիւններդ որ թէպէտ ինձ փորձ չեն, բայց
զիս կը վիրաւորեն : Ատոնք զիս իմ առաջադ-
րութենէս դրդուեցնելու բաւական չեն : Ես
իմ թշուառութիւնս կը սիրեմ, քանզի զիս իմ
անմեղութեանս մէջ կը թողու . կրօնքս ան-

տրտունջ համբերել կուտայ այն ամենայն չը-
 քաւորութեանց որոնք այժմու վիճակիս մէջ
 կրել ինծի հարկ է . քու խօսքերդ իմ որոշու-
 մըս ոչ միայն չի խախտեր, այլ զիս առաքինու-
 թեան ճամբուն մէջ աւելի պնդով կը հաստա-
 տէ : Աստուած իմ, գոչեց, ինծի քաջալերու-
 թիւն տուր . եթէ քու պաշտպանութենէդ օգ-
 նութիւն գտնեմ, անշուշտ պիտի պրծիմ այն
 որոգայթներէն որոնք ինծի պէս անփորձ աղջ-
 կան մը լարել կ'ուզուի : Ասպետ, կը յուսամ
 թէ պիտի գայ ժամանակ ուր դէպ իս այդպէս
 վարուելուդ համար պիտի ամչնաս : Արդեօք
 այն ժամանակը պիտի ուշանայ . չեմ գիտեր .
 բայց գիտցիր որ քու կողմանէդ եղող ամեն
 նոր փորձերն անյաջող պիտի ըլլան միւսնե-
 րուն պէս : Որչափ դո՞ն իմ առաջադրութեանս
 յաղթել ուզես, այնչափ ես ընդդիմութիւն
 ընելու յարգը պիտի ճանչնամ : Գուցէ կը զար-
 մանաս թէ ինծի պէս խեղճ աղջիկ մը ինչպէս
 այս մաքառման դէմկը դնէ : Քաջ գիտցիր,
 որ կրօնքը հարստահարելոց ուժն է . եւ անոնք
 որ անոր խոստումներուն կը հաւատան, մո-
 լութեան ամօթալի փորձերուն առջեւ չեն տը-
 կարանար : Ինչպէս կրնաս պահանջել որ հա-
 ւատամ թէ քու դիտաւորութիւններդ մաքուր
 եւ պարկեշտ են, քանի որ ինծի հետ այսպէս

կը վարուիս : Պէտք էր որ զիս մօրմէս զատէ .
 իր որպէս զի քեզի ամուսին ըլլալու հաւատամ .
 ոչ , անտարակոյս : Պատուաւոր մարդ մը այս-
 պէս չի վարուիր . դուն որ հարուստ ասպետ
 մ' ես , խեղճ աղջկան մ' ամուսին ըլլալու չես
 կրնար յանձն առնուլ . այլ կարծեցիր թէ աշ-
 խարհիս իրացն անփորձ աղջիկ մ' ըլլալու հա-
 մար , այս խորհրդածութիւնները չպիտի կըր-
 նամ ընել : Բոյց սխալեցար , ասպետ , մայրս
 ինծի արդէն սորվեցուցած է թէ անկեղծ խո-
 րին սիրով սիրող մը ինչպէս կը վարուի . ինծի
 ստէալ ըսած է չվստահիլ ան մարդոց որոնք
 չեն գիտեր յարդել ան՝ զոր խանդաղատանօք
 կը սիրեն : Փու վարմունքէդ շուտով հասկցայ
 թէ դիտաւորութիւններդ առաքինութեան օ-
 րինացը հակառակ են . եւ այն ատեն իմ վի-
 ճակիս բոլոր ծանրութիւնն իմացայ . այն ատեն
 հասկցայ թէ ինծի պիտոյ են կրօնքին տուած-
 զօրութիւնն ու մօրս խրատներուն յիշատակը ,
 որպէս զի դիտնամ թէ քու հրապուրանացդ
 գէմ դնելու պարտաւոր եմ . Աւելի հաւանա-
 կան է թէ զիս հալածելէ ճանձրանաս՝ քան թէ
 զիս հրապուրելու կարող ըլլաս :

Այս խօսքերն ասպետն այնպէս զայրացու-
 ցին , որ բոլորովին ցասմամբ բորբոքեցաւ , մա-
 նաւանդ որ 'ի բնէ բարկացոտ էր . Գլարային
 ընդդիմութիւնն անոր որտին մէջ վրէժ խնդ-

բելու սաստիկ յօժարութիւն մը յորդորեց :
Ասպետն իր կամացը դէմ արգելքներ տեսնելով, գրգռուեցաւ եւ այս գրգռութիւնն անոր անասնային կիրքն աւելի վտանգաւոր ըրաւ .
քանզի սրտին զայրոյթէն կրնար յետին ծայրի միջոցներու ձեռներէց ըլլալ : Արդարեւ անոր կատաղութիւնն այլ եւս չափ չէր գիտեր . անոր նորանշան կը թուէր թէ ինչպէս այն աստիճան հաստատութեամբ իրեն հակառակելու համարձակող մը կը գտնուի . իրեն՝ բերնէն եւ լած առաջին խոռքին՝ խկոյն հնազանդութիւն մատուցուիլը տեսնել միայն սովոր էր : Ուստի Գլարա սրտմտութեամբ թողուց եւ մեկնեցաւ , ըսելով թէ գիտէ ինչ կերպով կարողէ զնաբոնադատել որ իր կամացը զիջանի :

Գլարա , առանձին մնալով , երկար ատեն խորին վհատութեան մէջ ընկղմած մնաց : Տառասլանքն այնչափ ուժգին էր որ իրեն կը թուէր թէ կեանքն իրմէ կը բաժնուի . Այնուհետեւ ալ սենեկէն դուրս ելլելչուզեց . կերակուրը բերուեցաւ , բայց ճաշակել չուզեց : կեանքէն զզուած էր , քանզի իր աս կացութեանը մէջ թշնամիներէ անդադար պաշարուած , հանասլազորդ հալածանաց նշաւակ եւ լած էր . արդարեւ անոնց հետ մաքառելու բաւական քաֆալերութիւն կը զգար , բայց չէր

գիտեր թէ այս մաքառումն ինչ վախճան կամ
ինչ ելք պիտի ունենար :

Արդ Գերդրուտա անոր այցելութեան եկաւ,
եւ ասսետին ունեցած տրտմութիւնն անոր ի-
մացուց . եւ տեղեկացուց այն վտանգներուն ո-
րոնց զինք նշաւակ պիտի ընէր , եթէ այսպէս
անոր իղձերուն դէմ կենար : Գերդրուտա աղ-
ջըկան կ'ըսէր . Քու օգտիդ համար կը ջանամ
քեզ ստիպել որ ասսետը յուսահատեցնելու
չյամառիս . սրտմտութիւնն աւելնալով , կը ր-
նայ քեզի սոսկալի տանջանքներ կրել տալ , որ-
պէս զի քեզի իրեն անսալու զիջանել տայ :
Ընդդիմութենէ քեզի ինչ օգուտ կրնայ ըլ-
լալ , քանի որ անոր իշխանութեանը տակն ես ,
եւ անկէ պրծել չես կրնար : Ան սովոր է տես-
նել որ ամեն բանիր առջեւը կը խոնարհի , քու
ընդդիմութիւնդ , փոխանակ զնա մեղմացնե-
լու , ինչպէս որ դուն կը յուսաս , անոր կատա-
զութիւնը մանաւանդ պիտի աւելցնէ : Իմ խը-
րատներուս անսա , ասլա թէ ոչ վախցիր անոր
Վրէժխնդրութեան արդիւնքն : Գլարա ան-
դըրդուելի մնաց . արդէն իր որոշումն ըրած-
էր , մահն անպատութենէ աւելի կ'ընտրէր .

Բոլոր այդ խօսքերդ , ըստ Գերդրուտային ,
փոխանակ զիս համողելու որ ձեզի զիջանիմ ,
մոլութիւնն ինձի աւելի ատելի կ'երեւցնեն ,
Հասակիդ նայելով , քէնէ աւելի իմաստութիւն

կը պահանջուի . ուստի եւ պարտէիր ինծի բարի
 խրատներ տալ , հիմա ինծի այսպիսի խօսքեր
 ընկլու ինչպէս չամչցար : Նշան է թէ պարկեշտ
 եւ առաքինի կենաց երջանկութիւնը բնաւ
 չես գիտեր : Կին մը զոր ես մօրս տեղ դնել
 փափաքելու էի , զիս մոլորցնել եւ կորսնցնել
 կը խնդրէ . այսպիսի խօսքեր աւելի ատե-
 լի կ'երեւին քու բերանդքան ասպետին բե-
 րանը . ուստի զարմանք չէ օր ասպետն այսպի-
 սի առաջնորդ ունենալով , ինծի հետ այն կեր-
 պով վարուեցաւ : Գնա ուրեմն , զիս առանձին
 թող , քանզի քու խօսքերդ իմ խորհօւրդներս
 կը պղծեն : Աստուած տար թէ օր մը զգաս-
 տանայիր , եւ Աստուծոյ շնորհօքը արժանի-
 ըլայիր ընդունելու այն ներումը զոր այդ վա-
 րուքդ կորսնցուցած ես : Գերդրուտա , փո-
 խանակ համոզուելու եւ ստրջանալու առաւել
 եւս կատղած՝ մեծամեծ սպառնալիքներ ընե-
 լով դուրս ելաւ . երդուաւ Գլարային թէ ա-
 նոր այնչափ հակառակ կենալոն վրէժը խնդ-
 րելու պիտի ջանայ , եւ թէ ասյամառութիւնն
 իրեն զարմանալի կը թուի : Արդարեւ այս զեղծ
 կինը , երջանկութիւնը մոլութեան մէջ միայն
 կը կարծէր . Գլարային սքանչելի վարքն անոր
 փոխանակ խղճմտանքի գալու պատճառ ըլ-
 լալու , մանաւանդ կատաղութիւնն ու դժկամա-
 կութիւնը գրգռեց :

ԳԼՈՒԽ Դ.

Գլաւային աղօնեցը ե- առաջետին դարձը :

Գերդրուսա մեկնելէն ետքը , Գլարա դարձ-
եալ խորհելով թէ զինք պաշարող մարդոց չար
կամացը մատնուած է , շատ անհանգիստ ե-
ղաւ . ասպետին ու Գերդրուտային դէմ ցու-
ցըցած արիութիւնը զինք այնպէս յոգնեցուց
որ անոնց մեկնելէն ետքը , իսպառ անզօր եւ
լքեալ մնաց : Իր թշնամիներուն զինք այնպէս
պնդութեամբ հալածելը՝ իւր ապահովութեանը
համար չարագուշակնչան կը թուէր: Նոյն վայր-
կենին կեանքն անոր որչափ դաժան եւ մահը
քանիքաղցր կը թուէր . կը կարծէր թէ ամեն
բան զինք թողած լքած է , եւ մօտալուտ չարի-
քէն պրծելու հնարք մը բնաւ չէր տեսներ . միշտ
զգուշութեամբ կը դիտուէր եւ մօրն իմացը-
նելուն ամենեւին հնարը չկար : Ո՞րչափ խիստ
փորձ մըն էր այս անոր անփորձ մանկութեանը .
այնսլիսի դժուարին ժամանակներու մէջ մա-
նաւանդ մօրը իրեն տուած իմաստուն խրատ-
ները պէտք էր յիշել , եւ հարկաւոր զօրու-

թիւնը սոտանալ որպէս զի այնչափ խիստ փոր-
 ձերուն համբերելու կարողըլլար : Բայց վտան-
 գըն այնպէս մօտ էր որ արդէն կը կարծէր
 թէ իրեն համար այլ եւս յոյս չկայ տեսնելու
 ան՝ որ իրեն 'ի մանկութենէ հետէ առաջնորդ
 եղած էր, ոչ ալ լսելու զինք համբերութեան
 յորդորող այն սիրելի ճայնը : Ո՛չ բարի մայր,
 կ'ըսէր, հէք լքեալ աղջիկը, երանի՛ թէ քովս
 ըլայիր ու իմ այսչափ վշտերով եւ հալածում-
 ներով վհատեալորտիս քաջալերութիւն տա-
 յիր . քենէ հեռու ըլլալ ինծի մահ է . եւ քեզ
 տեսնելու այլ եւոյոյս չունիմ : Քեզ տեսնելու
 յոյսն որ զիս մինչեւ ցայսօր այս ամեն վշտաց
 տանելու ինծի ուժ տուաւ, կը թողու հիմա
 որ տեսնեմթէ ինծի համար այլ եւս փրկու-
 թիւն չկայ : Դու, թշուառ աղջկանդ համար
 կուլաս եւ կ'ողբաս եւ թերեւս մեռած կը կար-
 ծէս, Աստուած տար որ մեռնէր . այն ատեն
 ամեն վիշտերը պիտի վերջանային, ալ կաս-
 կածելու բան մը չպիտի ունենար : Այսպէս
 տառապանօք յուզեալ գիշեր մ'անցուց, քան-
 զի չէր գիտեր թէ իր հալածիչներն իրեն ընդ-
 դիմութեանը յաղթելու համար ինչ փորձերու
 պիտի յանդգնէին : Թէպէտ ինք միտքը դրած
 էր որ մահն անպատութենէ աւելի ընտրէ .
 բայց եւ այնպէս փախչելու հնարք մը կը մը-

տածէր , ուստի մտադրութեամբ ելաւ քննեց .
 քանզի մինչեւ այն օրը խուցին ամեն կողմն
 աղէկ դիտած չէր . տեսաւ որ պատերէն մէկը¹
 գաղտնի դուռ մ'ունի , որ որմերը զարդարող
 օթոցին տակ ծածկուած էր , զայն բանալու²
 ջանաց եւ երկայն ատեն աշխատելէ ետքը տե-
 սաւ որ դրանը փականքին վրայ կոճակ մը կայ
 այնպէս փոքր որ հազիւ կը նշմարուէր . մա-
 տովը կոճակը հրելուն պէս՝ դուռը բացուեցաւ ,
 եւ երկիւղիւ խառն ուրախութեամբ մը սկսաւ
 յառաջ երթալ մութ եւ նեղ սրահէն ուր բաց-
 ուած դուռը կը հանէր . եւ մանուսնոյ սան-
 դղի մը դլուխն եկաւ : Սանդուղէն իջնելով
 տեսաւ որ ընդարձակ գետնափորի մը մէջէ :
 Թէպէտ գիշեր էր , ինք ալ մինակ . ամենեւին
 չսուկաց , խորհեցաւ թէ ազատութիւնն իր
 քաջալերութենէն կախում ունի . ուստի ճամ-
 բան յառաջ տանելու շղանդաղեցաւ . գետնա-
 փորը , ինչպէս ըսինք , շատ ընդարձակ էր ,
 եւ բաւական ժամանակ տեւեց մինչեւ որ Գը-
 լարա հասաւ դրան մ'առջեւ որ գետնափորին
 վարի ծայրն էր : Դուռը բացաւ ու մատուռ
 մը տեսնելով աւելի ոգի առաւ , քանզի խոր-
 հեցաւ թէ մատուռ մը ամայի չի կրնար ըլլալ .
 ուստի հարկաւ հոն յաճախողներ սկստի գըտ-
 նուին : Մատրանը մէջ կանթեղ մը կախուած

ու մոմեր կը վառէին . Աստուածածնայ պատ-
կերի մ' առջեւն ալ , քանզի մատուոք սուրբ
կոյսին նուիրեալ կը թուէր , նոր քաղուած ծա-
ղիկներ դրուած էին . Գլարա սկսաւ մտածել
թէ չի կրնար ըլլալ որ այն սուրբ տեղն իւր
հալածիչներն այնպէս զարդարած ըլլան . ուս-
տի մատուոն այնպէս գեղեցիկ ընելու փոյթը
հարկաւ անմեղ ձեռաց գործ է : Այս մտածու-
թիւնը եւ Աստուածածնայ առաջիկայութիւնը
որուն միշտ առանձին բարեպաշտութիւն մ' ու-
նեցած էր , Գլարային հոգւոյն կատարեալ
հանդարտութիւն մը տուին . եւ իսկոյն ըս-
կըսաւ յուսահատութեան մէջ ինկած եւ Աս-
տուծոյ բարութիւնը մոռցած ըլլալուն համար ,
ինք իրեն մեղաղիր ըլլալ : Սեղանին առջեւ-
ծնկան վրայ գալով , բարեպաշտ եւ երախտա-
պարտ հոգւով մը սուրբ կոյսին հետեւեալ ա-
ղօթքն ըրաւ :

* Սուրբ կոյս , ահա քու առջիդ ծնկան վրայ
գալով , քեզի կը պաղատիմ որ սիրելի որդւոյդ
քով ինծի համար հզօր բարեխօս ըլլաս : Ո՛վ
դու , կոյսերուն անարատը , գթա ինձ , զիս
փրկէ , իմ առաքինութիւնս հոս մեծամեծ վը-
տանգներու մէջ կը գտնուի . դու միայն կա-
րողես զիս խլել այն չարիքներէն որ ինծի հա-
մար պատրաստուած են , եթէ այս բնակարա-

նին մէջ մնամ : Գիտես թէ իմ եռանդս քեզի
համար միշտ որչափ ջերմ եւ սաստիկ եղած է .
այս նեղութեան մէջ զիս մի լքաներ . Սուրբ
կոյս , եռ քու պաշտպանութեանդ վրայ քիչ մը
թերահաւատ գտնուեցայ , ո՞հ , քանի թշուառ
եմ , բայց ինծի ներէ : Հիմայ քու սեղանիդ առ
ջեւ ծնկան վրայ եկած եմ , հիմա որ կը տես
նեմթէ քու գթած նայուածքդ ինծի պէս խեղճ
եւ տկար արարածի մը բարութեամբ կը խո
նարհի , կը զգամ որ քաջալերութիւնս կը նո
րոգուի , եւ յոյսս նոր զօրութիւն կ'առնէ : Ա
հա արդէն քու պաշտպանութեանդ մէկ ար
դիւնքն է որ ես հիմայ այս սուրբ տեղը կը
գտնուիմ : Զիս հոս բերելով ինծի յիշել կու
տաս թէ հզօր Աստուած մը կայ , ով որ եռան
դեամբ եւ վստահութեամբ անոր կը դիմէ , չի
թողուիր ու լքուիր : Իմ թշուառ մօրս վրայ գը
թա , զաւակն իրեն դարձուր : Դու որ քու որ
դւոյդ համար այնչափ վիշտեր կրեցիր , հիմայ
անոր օդնէ , վշտահար սիրտը մխիթարէ :

* Անարատ կոյս , վրաս հսկէ , այնպէս ըրէ որ
միշտ քու սլաշտպանութեանդ արժանի գտնը
ուիմ . զիս յափշտակողին ինծի ըրածներուն
համար զղման պարկեւը շնորհէ . այնպէս ըրէ
որ անոր սիրտը կակղանայ , եւ դէպ 'ի լաւագոյն
զգացումներու դառնայ : Կեանքս միշտ մաքուր

եւ անմեղ եղաւ . զայն ահա քեզի կը նուիրեմ . քեզ օրհնելէ եւ քու գովեստներդ երգեցէ չպիտի դադրիմ . եթէ հարկ է , հոս կը նորոգեմ այն խոստումն ալ զոր մօրս ըրած եմ թէ այլ եւս թօռոլիք չտեսնեմ : Այս դղեկէն դուրս ելլելուս պէս քօղս պիտի առնեմ . եւ տիրոջը հարսն ըլլամ . ֆու բոլոր երախտեացդ փոխարէն անկեղծ սրտի մը իղձերն ընդունէ . Զիս ժիր եւ քաջ ըրէ , որ հնազանդութեամբ տոկամ այն փորձերուն զոր տակաւին պիտի կրեմ : Գթութեան աշօք ինծի նայէ , ով կոյսերուն ամենէն սուրբը , իղձերս ընդունէ : Ինծի համար Աստուծոյ քով բարեխօս եղիր :

Աղօթքը լմննալուն պէս՝ սրտին մէջ հանդարտութիւն մը զգաց եւ յուսալով թէ արագ ազատութիւն պիտի գտնէ , Աստուծոյ շնորհակալ եղաւ որ իրեն մխիթարութիւն շնորհելով՝ խռովեալ սիրտը հանդարտեցուց : Միտքը դրաւ որ մատրանը մէջ մնայ եւ ալ դղեակը չերթայ : Աւելի կ'ընտրէր այն տեղ մեռնիլ քան թէ առիթ ունենալ տեսնելու այնպիսի մարդիկ՝ որոնքիրեն չարիք կ'ուզեն : Այս Սուրբ տեղը լուսաւորող մոմերը եւ կանթեղը հետ զհետէ մարեցան , եւ Գլարա խաւարին մթութեան մը մէջ մնաց : Բայց սեղանին մօտ ըլլալով՝ իրեն այնպէս կը թուէր թէ կասկածելու

բան մը չկայ . վերջապէս առաւօտ եղաւ : Քիչ
մը ետքը մատրանը զանգակը զարնուիլը լսեց ,
շատ չանցաւ ծեր վերակացուն ալ եկաւ :

Գլարսյի ուրախութիւնը մեծ եղաւ , երբ
տեսաւ որ դղեկին վերակացուն է , որ արդէն
իրեն իմացուցած էր թէ վտանգի մէջ կը գըտ-
նուի : Ուստի մատրանը մէջ նոյն մարդուն հան-
դիպիլը՝ յաջող նշան համարեցաւ :

Թշուառ աղջիկ , ըստ վերակացուն , ինչ-
պէս կարող եղար մինչեւ հոս գալ :

Գլարա սկսաւ պատմել թէ հոն ինչպէս
եկաւ , եւ թէ որշափի մխիթարուեցաւ : Առոք
կոյսին աղօթք ըրի որ զիս տակաւին հալա-
ծող թշնամիներուս ձեռքէն ազատելու միջոց-
ներն ինծի շնորհէ , եւ արդէն վհատեալ հոգիս
հանդարտութիւն գտաւ . քու անակնկալ ա-
ռաջիկայութիւնդ մխիթարութիւնս կատարեալ
կ'ընէ , քանզի դու ինծի բարեկամ ես . դու
որ դղեկին մէջ մնալուն վտանգներն ինծի ի-
մացուցիր , կը յուսամթէ զիս այսուհետեւ չի
պիտի լքանես , հարկաւոր միջոցներն ինծի սլիտի
հայթայթես որպէս զի յափշտակէ չներուս ձեռ-
քէն պրծելու կարող ըլլամ . զիս մօրս պիտի
դարձնես , եւ այն ատեն երկուքս ալ չպիտի
դադրինք քեզի համար միշտ Աստուծմէ խնդ-
րելու որ քեզ երջանիկ ընէ ինչպէս որ ար-

ժանի ես , Այս երախտապարտութիւնն այս
մեծ բարերարութեան համար յաւիտենական
ոլիտի ըլլայ :

Դուն , ըստ վերակացուն , այսուհետեւ ալ
իմ օդնութեանս կարօտ չես . Աստուած , զոր
այնչափ եռանդեամբ օդնութեան կը կանչէիր ,
աղօթքդ լսեց : Ասպետը զղջման եկաւ , հիմա
քեզի հետ այնպէս գէշ վարուելուն վրայ կա-
մչնայ , քեզ այնչափ նեղելուն համար խիղճ ը-
րաւ , եւ եթէ կարելի է , քեզի ըրած վասնե-
րուն հատուցում ընելու պատրաստ է : Ինձի
յանձնեց որ քեզի իմացնեմ թէ քեզ կարելի
եղածին չափ շուտով մօրդ դարձնելու յօժար
է : Իր վարմունքը հիմա իրեն այնչափ ատելի
կ'երեւի որ այս աւետիսը քեզի անձամբ ի-
մացնելու չհամարձակեցաւ , վախնալով թէ
գուցէ իր առաջիկայութիւնը քու երջանկու-
թիւնդ վրդովէ :

Այլ եւս չպիտի տեսնես նենդաւոր գերդ-
րուտան . ասպետն աս անզգամ կնոջ քեզի
գէմտուած այնչափ չար խորհուրդներն անոր
երեսը տալով վոնտեց , ինչպէս որ արժանի
էր . մինչեւ անդամ ժամանակ չտուաւ անոր
որ քենէ ներում խնդրելու գայ . քանզի գի-
տէր թէ ան անզգամը տեսնել անդամ քեզի
ատելի է :

Ասպետին բարեկամներէն երկու անձ՝ որ ըստէպ անոր բարի խորհուրդներ կուտային եւ միշտ կը մերժուէին, անոր այս բարի որոշումն ըրած ատենը եկան, եւ զնա իւր առաջադրութեանը մէջ հաստատեցին, եւ 'ի միասին գացին խորհելու թէ ինչ կերպով քեզ ապահով մօրդ կրնան դրկել: Բայց մինչեւ երթալու ատենդ, թող աղջիկս քեզի ծառայէ, եւ . այն միայն քու սլիտոյքներդ հոգայ:

Գլարա չէր գիտեր թէ իր ուրախութիւնը եւ երախտագիտութիւնը անոր ինչ խօսքերով յայտնէ. արդարեւ, ինչպէս կրնար ակնկալութիւն ունենալ թէ այնչափ անցքեր անցնելէ ետքն իրեն այնպէս արագ ազատութիւն սլիտի շնորհուէր: Բայց այս վայրկենին աչուրներն Աստուածածնայ պատկերին դարձուց որ իր դիմացն էր, եւ իսկոյն խոստովանեցաւ թէ այս փոփոխութիւնն անոր հզօր բարեխօսութեանն արդիւնքն էր իր սիրելի որդւոյն քով: Ուստի նորէն ծնկան վրայ գալով գոչեց. Սուրբ կոյս, դու զիս ազատեցիր. դու գթացիր իմ եւ իմ հէք մօրս տառսալանացը. օրհնեալ ըլլաս, այսուհետեւ իմ կեանքս քեզի նըւիրուած է, քեզի պարտական եղած երախտագիտութիւնս եւ սէրս երբէք չպիտի մոռնամ: Մոռցար, Տիրամայր, թէ չտիազանց յուսահա-

տութեան մը մէջ՝ քու պաշտպանութենէդ
երկմտեցայ, եւ միայն քու սեղանիդ առջեւ
ըրած աղօթքո յիշեցիր, քեզի համար ունեցած
ջերմեռանդութիւնս այնչափ է որ ալ չի կը ը-
նար աճիլ, սակայն երբէք պիտի չնուազի.

Այս աղօթքը լմննալուն սկսած զուարթու-
թեամբ ելաւ մտածելովթէ շուտով իր սիրելի
մայրը պիտի տեսնէ. երբ յանկարծ տեսաւ որ
համեստ կերպարանքով եւ շատ գեղեցիկ աղ-
ջիկ մը մտաւ մատուոը ուր ինք կը զտնուէր.
պարզութիւն ու անմեղութիւն օրիորդին վրայ
կը փայլէին: Այս գեղեցիկ եւ մաքուր աղջիկը
վերակացուին աղջիկը՝ Ագնէսն էր: Ըստ սովո-
րականին եկած էր մատուոը նայելու թէ ար-
դեօք իր բացակայութեան ատենը բան մը պակ-
սած էր: Աղջկան զարմացումը մեծ եղաւ, երբ
Գլարա հոն տեսաւ, բայց հայրը սկսաւ պատ-
մել թէ ինչպէս Գլարա հոն եկած է, եւ թէ
ինչպէս պիտի աղատէր այն հալածումներէն
զորոնք մինչեւ այն ատեն իւր յափշտակիչնե-
րուն ձեռքէն կը կրէր: Այս պատմութիւնը լր-
սելով, խանդաղատեցաւ Ագնէս օրիորդին վը-
րայ, որ գեռ մանուկ, այնչափ վիշտեր կրելու
նշաւակ եղած էր:

Օրիորդ, ըստ Գլարային, հաճէ ընդունիլ
իմ ինսամքներուս. պիտի ջանամ քու այս դղե-

կին մէջ անցնելու օրերդ կարելի եղածին չափ
նեղութենէ ազատ ընել : Գու թշուառութեա-
նըդ պատմութիւնը զիս 'ի գութ շարժեց , եւ
վստահ եղիր որ բան մ'ինծի այնչափ հաճոյ
չպիտի ըլլայ , որչափ աշխատիլ որ քեզի դիւ-
րաւ համբերել տամ այն կարծ ժամանակ՝ զոր
տակաւին առանց մայրդ տեսնելու պիտի ան-
ցընես . Դժբախտութեան մէջ ունեցած քաջու-
թեանդ վրայ զարմացած եմ , եւ այս զարմա-
ցումս բանիւ չեմ կարող բացատրել , եւ այնպէս
կը կարծեմ թէ միայն քեզի ծառայութիւն ը-
նելով՝ այս զգացումս կրնամ քեզի յայտնել :

Գլարա Ագնէսին ծառայութեան առաջար-
կութիւնները շնորհակալութեամբ ընդունեց .
Եւ այս շնորհակալութեան սաստիկ զգացմանը
պատճառաւ՝ Ագնէսին գիրկն ինկաւ : Այս եր-
ջանիկ եւ ուրախալի վսյրկեաններն անցնելով .
երբ քիչ մը հանդարտեցան , Ագնէս իմացուց
Գլարային թէ ամէն առաւօտ իր սիրելի մա-
տուռը նայելու կուգայ : Միայն ես եմ , ըստաւ ,
որ ծաղիկները նորոգելու , նոր մոմեր դնելու ,
եւ այս կանթեղը վառելու հոգ կը տանիմ : Ե-
րեկ Սուրբ կոյսին տօնն էր , կրցածիս չափ պա-
տիւ եւ մեծարանք ցուցուցի երկնից թագու-
հոյն . ուստի ոեղանին վրայ դրի գեղեցիկ ծա-
ղիկներ որչափ որ կրցայ հայթայթել . իմ բոլոր

ունեցած երջանկութիւնս այն է որ այս տեղը
կարելի եղածին չափ արժանի ընեմ անոր՝ ո-
րուն նուիրուած է :

Գլարա անոր ըստ . Արդարեւ մատուռը մը-
տած ատենս , խորհեցայ որ այս տեղ սպաս
տանողը մանուկ աղջիկ մը սկիտի ըլլայ , եւ այս
խորհրդածութիւնն արագ ազատութեան յոյսն
ինծի տուաւ : Ի սկզբան որոշած էի որ այս սե-
ղանին առջեւ մեռնիմ մանաւանդ քանթէ դըլ-
եակ դառնամ :

Այն ատեն երեքն ալ խորհեցան որ այսպի-
սի մեծ պաշտպանութեան մը համար , Աստու-
ծոյ աղօթք մատուցանեն . ուստի ծնկան վրայ
գալով , շնորհակալ եղան Բարձրելոյն որ աս-
պետին դարձ շնորհեց :

Աղօթքը կատարուելուն պէս՝ միաբան մա-
տուռին դուրս ելան : Գլարա Ագնէսին հետ
դարձեալ հոն գալ խոստացաւ , որչափ ժամա-
նակ որ դղեկին մէջ անցնէր :

Ագնէս զԳլարա սենեակը տարաւ , եւ ա-
ռանձին թողուց որ քիչ մը հանգչի . այնովիսի
խռովայոյզ գիշեր մ'անցնելէն ետքը . արդա-
րեւ հանգստեան կարօտ էր . մօրը վրայ մտածե-
լով քունը տարաւ : Արթնցած ատենը՝ Ագնէսը
քովը տեսաւ որ անոր արթննալուն կ'սպասէր ,
որպէս զի պէտք եղած ծառայութիւններն ը-

նէ : Այս երկու աղջիկն իրարու հետ շատ սի-
րով ու համամիտ էին : Հաւատոյ բարեսլաշ-
տութիւն մ'ունէին : Մերթ ասեղնագործու-
թեամբ , մերթ կարդալու զբաղելով ուրախու-
թեամբ իրենց օրելը կ'անցնէին : Ամէն առա-
ւոտ մատուռը կ'երթային եւ նոր ծաղիկներով
կը զարդարէին : Այսպէս երջանիկ կ'ապրէին
սպասելով որ ասպետը Գլարային մօրը տունէն
դառնայ :



ԳԼՈՒԽ Ե.

Գլարային հօն ուրախութեանը

Ասպետը Գլարային այշելութիւն մընելով
իմացուց թէ կրնայ զինք առանց վտանգի իս-
կոյն մօրը սունը տանիլ . բայց կ'ուզէ անոր
դառնալն ինք անձամբ երթալով մօրը կան-
խաւ իմացնել , որպէս զի չըլլայ թէ մայրը
սաստիկ ուրախութենէն այլայլով վնասուի .
ուստի մեկնեցաւ եւ Գլարա մեծ անձկութեամբ
անոր գալուն սպասեց :

Գիւնեկոնտա աղջկանն անյայտ ըլլալէն 'ի
վեր , անհնարին տառապանաց մէջ էր : Շրջա-
կայ գիւղացւոց այլ եւ սյլ պատմութիւնները
կամ կարծիքն անոր տագնապները կը յաւելու-
ին : Աղջիկն ամեն տեղ փնտոել տուաւ , բայց
ասկէ շահ մը չըլլալէ զատ՝ զաւկին վրայ իր
երկիւղն աւելի սաստիկ եղաւ : Գլարա ամենուն
սիրելի ըլլալուն համար , անոր կորսուելուն
լուրն առհասարակ ամենուն սուկ պատճառած
էր : Այս տիսուր դէպքին վրայ ամեն մարդ
մէյմէկ բան կը կարծէր : Ոմանք կը պնդէին

Թէ խղգուած է . ուրիշները կ'ըսէին, ինքզինք
 սպաննած ըլլալու է . աս՝ քիչերուն կարծիքն
 էր, քանզի Գլարային բարեպաշտութիւնն ա-
 մեն մարդ կը ճանչնար, եւ գիտէր թէ անձ-
 նասպան չէր կրնար ըլլալ . իղան այնպիսիներ
 ալ որոնք կարծեցին թէ գայլէ մը յափշտակ-
 ուած է : Փայտահար մը սպատմեց թէ երկու-
 մարդ տեսած էր՝ որոնք անտառին մէջ կը
 թափառէին, եւ իրենց կերպարանքէն յայտնի
 կ'ընէին թէ լաւ մարդիկ չեն, մանաւանդ թէ
 լրտեսներու կը նմանէին : Այս պատմութիւնը
 Քոտոլֆին վրայ կառկածել տուաւ, բայց անոր
 վարմունքն այս կասկածը կը փարատէր . քանզի
 Գլարային անյայտ ըլլալուն լուրն առնելուն
 պէս, Քոտոլֆ բոլոր անտառն որոնեց, եւ աղ-
 ջիկը գտնելու համար ամեն տեղ հարցուց ու
 փնտռեց . Երբ տեսաւ թէ իր քննութիւններն
 ընդունայն են, Գիւնեկոնտային եկաւ եւ զայն
 մխիթարելու համար ամեն բան ըրաւ . ա-
 մեն հնարքներով ջանաց որ անոր կսկիծը
 մեղմացնէ եւ հանդարտեցնէ : Գիւնեկոնտա ա-
 նոր այնչափ խնամոցը համար շնորհակալ էր, ու
 մարդասիրութեամբ եւ երախտագիտութեամբ
 զինք կ'ընդունէր :

Վերջապէս Ատալսդան Գիւնեկոնտային ե-
 կաւ : Անոր իմացուց թէ աւետիս սւնի, եւ մեծ

ուրախութիւն պատճառելու համար եկած է :
Տեսաւ որ խեղճ կինը շատ փոխուած , աղջկա-
նը մեկնելէն 'ի վեր այնպէս ծերացած էր , որ-
պէս թէ տասը տարի աւելի ապրած ըլլար .
քանզի արդարեւ շատ վիշտ կրած էր :

Խեղճ կինն այս աստիճան փոխուած տեսնե-
լով , ասպետն 'ի գութ շարժեցաւ , ու զգաս-
տացաւ , Այն ատեն սկսաւ ատել իր վարմուն-
քը եւ իր չար յօժարութեանցն անսալուն վրայ
սաստիկ ցաւիլ : Իւր բար կեանքը կ'ուզէր նր-
ուիրել այս երկու կանանց երջանկութեանը զո-
րոնք այնչափ տառապանաց նշասկ ըրած էր :
Այսպէս զգաստացած ըլլալուն վրայ շատ գոհ
էր , եւ այն բարի յառաջադրութիւնն ընելու
համար ալ մեծ ուրախութիւն կը զգար :

Այսուհետեւ երջանիկ եղիր , ըստ Գիւնէ :
կոնտային . աղջիկդ քիչ ատենէն քեզի պիտի
դառնայ , զայն նորէն պիտի տեսնես : Մէկը
յափշտակեց աղջիկդ , եւ անոր գեղեցկութիւ-
նը տեսնելով , շկրցաւ իր կիրքը սանձել : Բայց
տեսնելով որ աղջիկը . զգաստութեան եւ բա-
րեպաշտութեան մէջ սնած ըլլալով , հրապու-
րանաց փորձութեանցը դէմ դնելու կարող է :
Հասկցաւ որ կրօնքը մարդուս ուժ եւ քաջալե-
րութիւն կուտայ , հիմայ կը դղջայ , եւ իր յան-
ցանքին վրայ ամշնալով , քենէ ներում կը խնդ-

լէ , արդեօք սկիտի մերժես զինքը :

Թէպէտ անոր գործը սպարսաւելի է , ըստ
Գիւնեկոնտա , իմ աղջիկս ինծի դարձնելուն հա-
մար ամեն բան կը մոռնամ :

Ըսէ անոր որ կը ներեմ , միայն կ'աղաչեմ որ
մեր սուրբ կրօնքին պատուէրներուն անսայ ,
որպէս զի իր չար յօժարութեանցը դէմ դնելու
կարող ըլլայ :

Այս խօսքերուն վրայ ասսկետն անոր ոտքն
ինկաւ խոստովանելով թէ անոր այսչափ հոգ
եւ անձկութիւն պատճառողը եւ աղջիկը յա-
փրշտակելով այնչափ վիշտեր կրել տուողն ին-
քըն է . այսպիսի մեծ յանցանքի մը համար նա-
րէն սկսաւ ներում խնդրել :

Գիւնեկոնտա մարդասիրութեամբ զինք վեր-
ցուց եւ ըստ . Ասպետ , այս ապաշաւանացդ
նայելով քու յանցաւորութեան գործդ կ'ուզեմ
մոռնալ . բայց աղէկ յիշէ որ Աստուած մը կայ
որ յանձանքը կը պատժէ , առաքինութիւնը
կը վարձատրէ . եւ քու զղջմանդ մէջ բարձրե-
լոյն բարութեան արդիւնքը ճանչցիր :

Թէպէտ յանցաւոր ես , զաւակս ինծի դար-
ձնելուդ համար քեզի շնորհակալ եմ . այս եր-
ջանկութեան վայրկեանը որուն հասնելու յոյս
շունէի եւ դու հիմա ինծի զգալ տուիր , ինծի
մոռցնել կուտայ այն դժբախտութիւններն ո-
րոնց պատճառը դուն էիր :

Ես շնորհակալութեան արժանի չեմ, ըստ
ասպետը, ձեզի հետ ունեցած վարմունքս գար-
շելի էր, թէպէտ զղջացի եւ ըրած անիրա-
ւութեանս հատուցումն ըրի, բայց խիղճս յա-
փիտեան պիտի մնայ: Աղջիկդ քեզի դարձնե-
լով միայն խղճմտանքէս ստիպուած սուրբ
պարտք մը պիտի կատարած ըլլամ: Իմ յան-
ցանքիս մեծութիւնն երբէք չեմ ջանար թա-
քուցանել. հիմա քեզի քու աղջկանդ յափշ-
տակուելուն պատմութիւնը ընեմ. ուստի սկը-
ռաւ համառօտիւ պատմել թէ ինչպէս կեղծ-
եօք կոռի մը միջոցաւ Գլարային հաւտացուց
թէ ոչ միայն իր յափշտակիչը չէր այլ եւ Գլ-
արան աղատել յանձն առած է. աւելցուց եւս
թէ, տեսնելով որ Գլարա իւր իղձերուն դէմ
կը կենայ, աս գործին մէջ իրեն օգնական ե-
ղող կնկան մը գէշ խորհուրդներովը ջանաց զնա
հրապուրել:

Աղջկանդ բնակած սենեակն, երբեմն մօրս
էր: Շատ բարեպաշտ ըլլալուն՝ փոքրիկ մա-
տուռ մը շինել տուաւ, ու սուրբ կոյսին նը-
ւիրեց: Հոն զարդարելու ինք հոգ կը տանէր.
Աւելի դիւրաւ հոն երթալու կարող ըլլալու
համար իր սենեկէն դուռ մը շինել տուած էր
որ հոն կը հանէր: Նոյն դռնէն էրոր Գլարա
ալ կարող եղաւ այն սուրբ տեղն երթալ: Ես

զինք կոն տեսայ որ աղօթք կ'ընէր , այնպիսի
եռանդեամբ Աստուծոյ պաշտպանութիւնը կը
խնդրէր որ ինծի սոսկում բերաւ . անոր ա-
ղօթքէն 'ի գութ շարժելով , ահա զգաստացայ ,
երդուայ որ անոր վեսս չընեմ , եւ իր մօրը
տանիմ : Գիւնեկոնտա , ահա աս պատմութենէս
իմ վարմանցս բոլոր գարշութիւնը կը տեսնես :
Ես ինծի չխնայեցի , քանզի շատ աղէկ գիտէի
թէ համարձակ եւ անկեղծ խոստովանութիւն
մը միայն կրնայ քու կողմանէդ ներման ար-
ժանի ըլլալ : Հիմա որ այս աղետալի պատահ-
ման դէպքերն իմացար , արդեօք պիտի ներես
ինծի : Գիւնեկոնտա այս խորին եւ ճշմարիտ
զղջման վրայ 'ի գութ շարժելով , կրկին ըսաւ
թէ կը ներէ :

Հրապուրիչ կիրք մը քեզ մոլորեցուց . բայց
ուրախ եմ տեսնելով որ զգաստանալու յօժար
ոգի մ'ունիս : Մարդ բարին աւելի դժուարաւ
կ'ընէ քան թէ չարը . բայց երբ մարդուն սիր-
ուը բարի է , կրնայ միշտ գէշ խորհուրդներու
դէմ դնել , եւ եթէ երբեմն չարութենէ մը հը-
րապուրուի , անոր համար կը հրապուրուի որ-
պէս զի ետքը դառնալէս զղջայ եւ ցաւագին
սրտիւ . բայց , համոզուած եմ թէ այս վերջի
գործողութեանդ պատճառն անկեղծ զղջումն
է որ զիս վերջին աստիճան ուրախ կ'ընէ :

Ասպետն իր յանցանացը ներումն ընդունած
 ըլլալուն վստահութիւն առնելով , գիւնեկոն-
 տային ըստ թէ , Գլարային ըրած աղօթքէն
 իմացաւ թէ երիտասարդ մը կը սիրէ , ուստի
 եւ կ'աղաչեմ ըստ , հաւանութիւն տոր այս
 ամուսնութեան որ անտարակոյս այն երկուքին
 փափաքանացը լրումը պիտի ըլլոյ : Կիւնեկոն-
 տա ասպետին սլատասխան տուաւ ըսելով
 թէ , թէսէտ իւր աղջիկն երջանիկ տեսնելու
 կը փափաքի բայց անոր այս խնդիրը չի կրնար
 կատարել : Այն երիտասարդն որուն վրայ կը
 խոսիս , ըստ ասպետին , Գլարան կատաղի
 գայլի մը ժանիքէն աղատելով , ստոյգ մահ-
 ուընէ մը փրկեց : Այս անձնանուիրութեան
 եւ քաջութեան գործը , ինչու նաեւ անոր
 անձին հանգամանքները , աղջկանս սրտին վը-
 րայ սերտ տպաւորութիւն մ'ըրին , Բայց այս
 երիտասարդը հարուստ ընտանիքէ մըն է .
 ուստի հոյրը չի կրնար հաւանիլ որ որդին այս-
 պիսի աղքատ աղջիկ մ'առնէ : Ուստի Գլարա-
 յին ըսի թէ թողու այն սէրն որ կրնայ աղե-
 տակի ըլլու . սուրբ կոյսին պատկերին առջեւ
 ուխտեց որ այլ եւս այն երիտասարդը չտեսնէ .
 Խօսքին վրայ հաստատ կեցաւ , եւ թէսէտ ա-
 նոր յիշատակը մտքէն ջնջուած չէ . գիտէ սա-
 կայն թէ ըրած ուխտին չի կրնար դրժել :

Ասպետը չհամոզուեցաւ թէ Գլարային համար իւր սիրահարէն հրաժարել հարկ է . սակայն այլ եւս այն նիւթին վրայ խօսել չուզեց . երթալու պատրաստուեցաւ . Գիւնեկոնտան վստահ ընելով թէ ընդ հուպ աղջիկը պիտի տեսնէ :

Յօտոլֆ , որ աղջկանը գտնուելուն բոլորովին անտեղեակ էր , Գիւնեկոնտային եկաւ իմացնելու համար թէ եթէ աղջիկը չգտնուի , ինք անոր նեցուկ եւ օգնական ըլլալու յօժար է : Գիւնեկոնտա անոր առաջարկութիւնն ընդունեց , ըսելով թէ ինք ալ անոր մօր տեղ ըլլալու պատրաստ է . եւ թէ այն խնամքները զոր իրեն կը ցուցնէր զի՞նք արդէն այս անուան արժանի կ'ընեն :

Ասպետը չուզեց որ Յօտոլֆ Գլարային գլոնուիլն իմանայ որսէս զի մէկէն տեսնելով զորմանայ . ուստի Գիւնեկոնտային առաջարկեց որ աղջկանը գտնուիլը չիմացնէ :

Յօտոլֆ աղջկանը անյայտ ըլլալէն ՚ի վեր սովորութիւն ըրած էր ող ամեն անդամ Գիւնեկոնտային կը հարցնէր թէ արդեօք աղջկանը վրայ լուր մ'ունի՞ : Ամեն անդամ ալ Գիւնեկոնտային համար որս մը զարնելով կը բերէր . Այս անդամ ներս մտնելուն զարմացաւ երբ Գիւնեկոնտային քով օտարական մը տեսաւ ,

Բայց ասսկետն անոր ըստ թէ , ինչպէս նա
նոյնպէս ինք կու գայ Գիւնեկոնտայէն տեղեւ-
կանալու եթէ աղջկանը վրայ աւետիս մ'առած-
է : Ակսան միաբան խօսակցիլ , եւ Ատալսդան
փոխանակ Ռօտոլֆին նախանձու աչքով նայե-
լու , զայն սիրով ընդունեց : Խեղճ Ռօտոլֆ խոր
տիսրութեան մէջ ընկղմած էր . Եւ 'ի զուր կը
ջանար իւր տէրութիւնը չյայանել . անհը-
նար էր որ մարդ չնշմարէր թէ այս երիտա-
սարդին վրայ վիշտ մը կը տիրէ : Շատ անգամ
առանց միտ դնելու բերնէն այնպիսի խօսքեր
կը հանէր , որով անոր սրտին վիշտ եղող դիպ-
ուածը կը նշմարուէր . 'Գիւնեկոնտա ալ միշտ
կը սիրէր այս երիտասարդը՝ քանզի այս վըշ-
տագին մօրը ցաւերուն կարեկից էր :

Այս խօսակցութեան մէջ ասպետը Ռօտոլֆին
ազնիւ կերպերուն եւ սքանչելի հանգամանացը
վրայ զարմացաւ : Ուստի դատեց թէ . արժանի
է ամուսին ըլլալու այն աղջկան՝ զոր երջանիկ
ընել կ'ուզէր : Բայց եւ այնպէս առաջին քըն-
ութիւնը բաւական համարել չուզեց : Ուստի
զգուշացաւ որ դեռ անոր չյայտնէ թէ Գլա-
րային ուր ըլլալը դիտէ . նա մանաւանդ անոր
անհետ ըլլալուն վրայ խօսւած ատենը , այն-
պէս խօսեցաւ ինչպէս որ այնպիսի սոսկալի
դժբախտութենէ մը դողացող մէկը կը խօսի :

Յօտոլֆ , ասսկետին խօսքերէն քաջալերուե-
լով , անոր իմացուց թէ Գլարան կը սիրէ , բայց
իր հայրը չվշտացնելու համար անոր ամուսին
ըլլալու երջանկութենէն հրաժարիլ ստիպուած-
է , եւ սա կասկածը թէ Գլարա կրնայ աւազա-
կաց ձեռք ինկած ըլլալ , իր այն թշուառու-
թիւնն աւելի մեծ ըրած է : Ասպետը Յօտոլֆին
ցաւոցը գթալով , չկրցաւ ալ երկայն ատեն ան-
կէ ծածկել թէ Գլարային բնակած տեղը գի-
տէ . ուստի սկսաւ պատմել թէ Գլարա ինչպէս
յափշտակուեցաւ , եւ թէ անոր ամուսին ըլլա-
լու որչափ արժանի է : Յօտոլֆէն ներում ըն-
դունելէ ետքը , անոր ըսաւ թէ այսուհետեւ
Գլարա իմ սիրելի քոյրո պիտի ըլլայ :

Կ'ուզեմ , ըսաւ Յօտոլֆին , ես անձամք եր-
թալ հայրդ գանել . խնդիրքս չի պիտի կրնայ
մերժել , երբ իմանայ թէ կինը զոր ես իր որ-
դոյն համար կ'առաջարկեմ , որդոյն օժտին
հաւասար օժիտ ունի . եւ այնուհետեւ կ'ուզեմ
ձեր քով բարեկամի տիտղոսը ստանալ . եւ չեմ
կարծեր թէ ձեզի ըրած գեշութիւններուս փո-
խարէն ընելու համար , աւելի բան մ'ըրած կ'-
ըլլամ , եթէ այդպէս ընեմ :



ԳԼՈՒԽ.

Պ. Հայոցին առաջինութիւնը էլ Հարքադրուի

Այս միջոցին, Գլարա Ատալսդանին դղեակն էր, եւ հանգիստկ' ապրէր : Ագնէս անոր համար ամէն կերպով ակնածութիւն ունէր . սակայն մօրմէն հեռու ըլլալուն համար զգացած տրխութիւնն՝ անոր այս երջանկութիւնը կը թունաւորէր . կը տեսնէր որ ասպետը գալու կ'ուշանայ, եւ թէպէտ ասպետը գացած ատենը Գլարան վստահացուցած էր, ըսելով թէ քիչ ատենէն Գիւնեկոնտային հետ սլիտի միանայ . Երբեմն այս խոստման անկեղծութեանը վրայ կը կասկածէր, բայց այս կասկածելը քիչ կը տեւէր, քանզի անոր աննենգ հոգին աւելի կ'ուզէր բարի գործերու հաւատալ քան թէ գէշ գործերու : Թէպէտ Գլարային այս կացութիւնը Գիզիգապէս անոր խոնարհ խրճթին մէջ ունեցած վիճակէն շատ տարրէր էր, բայց եւ այնպէս այն թշուառութիւնը կը փնտոէր : Բոլոր այն զեղխութիւնն ու առատութիւնը որոնցմէ պաշարուած էր, չկրցան ջնջել անոր սրտէն այն

փափաքը զոր իւր անցեալ վիճակին վրայ ու-
նէր . ուստի մեծ ուրախութեամբ կը մտածէր
որ շուտով իւր մանկութեանն օրորոցն եղող
տեղը պիտի տեսնէ :

Այս տխուր խորհրդածութեանց մէջ ընկըլ-
մած էր . երբ ձայն մը լսեց : Կարծելով թէ Ագ-
նէս իրեն այցելութեան կուգայ , տեղէն ան-
դամ չշարժեցաւ , բայց զարմացումն ինչ մեծ
եղաւ , երբ ետին դառնալով , մայրը տեսաւ :

Աւելորդ է նկարագրել ան վայրկեանը յո-
րում այն երկու սիրտերը միացած երկայն տ-
տեն իրար գգուելով , ուրախութեամբ եւ եր-
ջանկութեամբ խառն արտասուք միայն այն
գգուանքները կ'ընդհատէին . Անոնց կրած բո-
լոր վիշտերը նոյն վայրկենին մոռցուեցան , որ-
պէս զի տեղի տան այն ուրախական զգացում-
ներուն զոր Գիւնէկոնտա եւ Գլարա իրար տես-
նելով կը զգային : Անոնց հոգւոյն մէջ հան-
դարտութիւնը մտաւ : Երբ այն քաղցր յուզ-
մունքը դադրեցան , երկուքն ալ սկսան իրար-
մէ բաժնուելէ ետքն իրենց պատահած դէպ-
քերը պատմել : Գիւնեկոնտա աղջկան պատա-
հած դէպքերը լսելէ ետքը , անոր առաքինի
ընդդիմութիւնը դովելէ շդադրեցաւ : Տես ու-
րեմն , կրօնքը որպիսի զօրաւոր օդնական մըն
է անոնց՝ որոնք անոր մխիթարութիւններուն

կը հաւատան : Պարտաւորեց աղջիկն որ խոր ի-
մաստուն ընթացքին մէջ մնայ . անոր հասկը-
ցուց թէ իր տառապանազը մէջ Աստուած ա-
նոր որչափ օդներ , ու զօրութիւն տուած էր
որպէս զի թելադրութեանց դէմ դնելու կա-
րող ըլլայ :

Թէպէտ Գլարա մայրը տեսնելուն վրայ մեծ
ուրախութիւն կը զգար բայց եւ այնպէս վիշտ
մ'ունէր զոր խոստովանելու չէր համարձա-
կեր : Ի՞նչպէս կրնար խօսել այն անձին վրայ
զոր խոպառ մոռնալու երդում ըրած էր : Ան-
շուշտ մօրմէն պիտի բամբասուէր այնպիսի մը-
տածութեան համար՝ որ մանաւանդ անոր ոըր-
տէն խոպառ անհետ եղած ըլլալու էր . ուստի
շատ ջանաց որ իր այն տագնապը կարճէ , բայց
չկրցաւ : Արդ Գլարային որտին տագնապը զոր
ծածկել չկրցաւ , յայտնի կ'երեւէր թէ կը ցան-
կար գիտնալ բան մը թէպէտ այն բանին վրայ
բնաւ հարձուիորձ չընելու հաստատուն յա-
ռաջադրութիւն ըրած էր : Ուստի իր ամենէն
մեծ խորհուրդը՝ սրտինմէջ ճնշելու դատապար-
տուած տեսաւ զինք : Մայրն ինք իրեն ըրած
բոնադատութիւնը նշմարեց , քանզի մայրա-
կան սէրն անոր իր աղջկանը վրայ ամեն բան
մանր դիտել կուտար . հասկցաւ թէ աղջիկը
կ'ուզէ իրեն հարցումներ ընել այն անձին վրայ

որ վիճակը գիտես թէ անոր ցանկալի էր :

Ուրիշ ինչ ունիս աղջիկս , ըստ անորքաղցրութեամբ , աներկիւղ պատմէ . եթէ սրտիդ խորն ուրիշ անհանգստութիւն մըն ալ կայ , վստահութեամբ ու անկասկած յայտնէ :

Գլարա իր մօրը տուած վստահութենէն քաջալերուելով , խոստվանեցաւ թէ Ռօտոլֆին վիճակը գիտնալ կը ցանկայ , եւ թէ անոր վրայ խօսել չուզելուն պատճառն՝ Աստուածածնայ պատկերին առջեւ ըրած խոստումն էր , որով կ'ստիպուէր ջանալ որ անոր յիշատակը կարելի եղածին չափ մտք էն հանէ :

Ներէ ինծի , սիրելի մայր , գոչեց , որ անոր յիշատակը չկրցայ մտքէս 'ի սպառ հանել : Կրած վիշտերս մտքիս վրայ այնպիսի ազդեցութիւն մ'ըրած են , որ զանոնք չեմ կրնար յիշել , առանց յիշելու միանգամայն զանոնք որ մեծանձնութեամբ եւ անձնանուիրութեամբ զիս այն վիշտերէն ազատած են :

Շատ աղէկ , աղջիկս , ըստ Գիւնեկոնտա , քեզ այդ մասին ալ գոհ ընեմ . քու անհետ ըլլալէդ 'ի կեր , Ռօտոլֆ չդադրեցաւ ինծի այցելութիւն ընելէ . եւ ինծի այնպիսի մխիթարութիւններ տալէ՝ որոնք կրնային փոքր 'ի շատէ իմ կասկածներս փարատել . անոր ինծի համար ունեցած բարութիւնն անզուգական է . վերջապէս ,

զիս հաճեցրնելու մտօք բոլոր ըրածներն շեմ
կրնար ըստ բաւականին գովել : Գույափշտա-
կութեանդ լուրը տարածուելուն պէս՝ բոլոր
շրջակայ գիւղերն որոնեց , որպէս զի քեզ գըտ-
նելու կարողը լսու . Եւ միշտ խորին տրտմու-
թեամբ ետ կը դառնար ինծի իմացրնելու թէ
բոլոր ջանքերն անօդուտ եղան : Համառօտիւ-
րուեմ , Յօտոլֆ վիշտերս մեղմացրնելու համար
ինչ որ կարող էր ըրաւ :

Գլարա այս պատմութիւնները լսելով՝ ուրա-
խութեան զարմանօք լեցուեցաւ տեսնելով որ
ան՝ որուն իր սիրու բոլորովին տուած էր ,
զինք սիրելէ եւ իր վրայ մտածելէ դադրած-
չէ : Թէսկատ կը հաւատար թէ երբէք անորը
պիտի չըլլայ , բայց եւ այնպէս իրեն համար
քաղցր միսիթարութիւն մ'էր գիտնալ թէ ա-
նոր խանդակթ սիրելին է : Արդ մօրն ըրած-
պատմութիւնն ու գովեստները Յօտոլֆին հա-
մար՝ զԳլարա կարեւոր խորհրդածութեան մէջ
ընկղմած էին , երբ յանկարծ դուռը բացուե-
ցաւ , եւ Յօտոլֆ հօրը հետ ներս մտաւ :

Յօտոլֆ Գլարայէն վերջին անգամ բաժնը-
ւելէն 'ի վեր՝ շատ փոխուած էր . Երեսը դեղ-
նած էր , եւ դէմքին վրայ խորին վիշտիրու հետ-
քեր կը նշմարուէին :

Բայց իր սիրելին տեսնելուն պէս , դէմքը ըս-

կըսաւ կենդանութիւն առնուլ, կերպարանքին
վրայ տակաւորուած երջանկութիւնը գրեթէ կը¹
խօսէր թէ անոր համար ամեն վիշտ դադրած
է : Գլարա զնա տեսնելուն ալէս՝ ուրախու-
թեան ու զարմացման ձայն մ'արձակեց . բայց
շուտով իրեն եկաւ . եւ երեսին վրայ ալատած
կարմրութենէն՝ յայտնի կը տեսնուէր թէ սըր-
տին այն ուրախութեան ուժգնութենէն յա-
փշտակուած ըլլալուն համար շատ ամչցաւ :

Յօսուլֆին հայրը Գլարային իմաստուն վա-
րուցը համար իր մեծարանքը յայտնեց , անոր
առաքինութեանը վրայ զարմացաւ , եւ սկսաւ
գովելանոր հաստատութիւնն որով դէմ դրած
էր այնչափ հրապուրանաց՝ զորս նիւթելէ չէին
դադրած որպէս զի խոտորեցընեն ու մոլորե-
ցընեն : Վերջապէս զինք երջանիկ կը համարէր
որ անոր հայր սկիտի ըլլար :

Զեր աղքատութիւնը 'ի սկզբանէ պատճառ
եղաւ որ քու ամուսնութեանդ որ իմ որդւոյս
հետ պիտի ըլլար , չհաւանիմ . քեզ չէի ճանչ-
նար , որդիս ալ սիրոյ կրից տաստկութեամբը
պաշարուած կարծելով, ինչոր ինծիքեզի համար
կըսէր, չէի հաւատար : Հիմա քու կրած փոր-
ձութեանդ հանդէսը տեսնելով, կը հաւատամ
թէ դուն անոր քեզի համար ըսածներէն շատ
առաւել ես : Զիս երջանիկ պիտի համարիմ եթէ

ինձ աղջիկ ըլլալու տիտղոսն ընդունելու համիս
ի հարկէ չես զիտեր թէ քու կացութիւնդ
բոլորովին փոխուեցաւ եւ ձեր հարստութիւնն
որդւոյս հարստութեանը հաւասար եղաւ : Քու
առաքինութիւնդ վարձատրութեան արժանի
էր , եւ ան՝ որ քեզի այնչափ խիստ փորձեր
կրել տուաւ , հիմա կրցածին չափ քեզ ըրած
չարեացը փոխարէնն ընել կուզէ :

Այս խօսակցութեան ատեն՝ ասպետը ներս
մտաւ . Գլարային մօտենալով անոր աղաչեց որ
իր առաջիկայութենէն չսոսկայ , եւ ըստ թէ
այսուհետեւ իրմէ կասկածելու բան մը չունի.
Եւ թէ անոր համար , այն բաները կ'զգայ ,
ինչ որ անձնանուէր եղբայր մը իր սիրելի քը-
րոջն երջանկութեանը համար կրնայ զգալ : Նե-
րէ ինձ , ըստ անոր . քեզի կրել տուած հալա-
ծանքներս մոռցիր . այն երջանկութիւնը՝ զոր
սկիտիվայելես , քեզի պատճառած վիշտերուս
վայրկեանները թող մտքէդ ջնջէ : Քու աղնիւ
եւ առաքինի վարուցդ համար քեզի վարձք՝ եւ
ըրածներուս փոխարէն դարման ընելու պար-
տական եմ . այսուհետեւ երջանիկ եղիր , վիճա-
կակից ըլլալով այն անձին հետ որ քեզի արժա-
նի է : Զեմկարծեր թէ քեզի ըրած զրկանա-
ցըս կրնամ ուրիշ կերպով այնպէս աղէկ դար-
ման ընել , ինչպէս քու կաթոքին իղձդ կատա-

բելով . բարեկամէ ընդունելու պէս՝ իմքեզի
տալու օժիտս ընդունէ , Քեզ ամուսին ըլլա-
լու անձն երջանիկ ընելու համար՝ քու առաքի-
նութիւններդ բաւական են . բայց քու առա-
տածեռնութեանդ դիմողներն երջանիկ ընելու
համար , պէտք է որ ստացուածք ունենաս :

Այս խօսքերը լսելով , Գլարա այնպէս ապշե-
ցաւ որ պապանձեցաւ . ասպետին ըսածներուն
չէր կրնար հաւատալ . այսպիսի արագ փոփո-
խութիւն մ' անոր անհնարին կը թուէր :
Արդարեւ՝ ինչպէս կրնար հաւատալ թէ իր եր-
ջանկութիւնը պիտի գայ այնպիսի անձէ մը՝ որ
քանի մը օր յառաջ զինք այնչափ թշուառ ը-
րած էր : Աչքին առջեւ եղածներն ու բոլոր
ըսածներն անոր այնչափ անհաւատի կը թը-
ւէին , որ կը կարծէր թէ երազ կը տեսնէ :

Ասպետն , անոր կասկածը նշմարելով , ա-
նոր ըսաւ թէ իր զգացումները բոլորովին փոխ-
ւած են , եւ թէ , կուզէ անոր օրինակին հետե-
ւիլ , ու այնուհետեւ ըլլալ այնչափ կրօնասէր ,
որչափ մինչեւ ցայնժամ անհաւատ եղած էր :
Յորմէ հետէ , ըսաւ , տեսայ որ դու աղօթքի
մէջ այնչափ զօրութիւն քաղեցիր , հասկըցայ
թէ բարեպաշտութեան ճամբան հետեւելու եւ
առաքինի ըլլալու համար , քեզի պէս Աստու-
ծոյ վրայ վստահութիւն ունենալ պէտք է : Առ-

թէն զնա վստահացուց թէ իր անցեալքոնած
ընթացքը հիմա կ'ատէ : Օրիորդ , ըստ , ահա
կը մեկնիմ , հայրենեացս համար կռուելու պիտի
երթամ . ուստի կ'ուղեմ որ ըրած յանցանք-
ներուս փոխարէն արդեամբք դարման ընեմ :
Դեռ քենէ չըաժնուած' ներողութիւնի կը խըն-
դրեմ , մի թէ կրնան զլանալ :

Ան ատեն Գլարա հաւատաց թէ ասպետին
զղջումն անկեղծ է , եւ սլատուոյ եւ առաքի-
նութեան ճամբուն հետեւիլ որոշած է : Ուստի
անոր այս նոր վարքէն յորդորուեցաւ որ մեծ-
անձնութեամբ անոր ներում շնորհէ : Վստա-
հութեամբ եւ գոհութեամբ անոր մօտենալով
ձեռք երկնցուց . ասպետը Գլարայի ձեռքը
պնդելով՝ շնորհակալ եղաւ որ իրեն ներում շր-
նորհելու կը հաճի , եւ կը թողու որ երթայ ,
որպէս զի իր սխալմունքն ուղղելու կարողըլլայ:

Քենէ հեռանալէս առաջ , ըստ անոր , նշա-
նածիդ հետ ինծի մինչեւ մատուռն ընկերանա-
լու շնորհք ըրէ : Երթանք իմ դարձիս համար
միաբան Վստուծոյ շնորհակալ ըլլանք : Խոստա-
ցիր ինծի թէ մօրդ հետ այս դղեկին մէջ մնա-
լու պիտի հաճիս . այսուհետեւ այս դղեակը ձեր
բնակարանը պիտի ըլլայ : Ինծի մեծ երջանկու-
թեան սլատճառ պիտի ըլլաք , եթէ հոս մնա-
լու հաւանիք : Բոտոլֆ քեզի ամօւսին պիտի ըլ-

լայ տարի մը ետքը , այնօրն որ սուրբ Կոյսին
առջեւ այնպիսի բարեպաշտութեամբ աղօթելդ
տեսայ :

Մատուոք հասնելնուն պէս՝ մեծ շնորհակա-
լութեամբ Ասոուծոյ գոհութիւն մատուցին ի-
րենց այն մեծ բարերարութիւնները շնորհելուն
համար : Յետոյ ՚ի նշան հարսնախօսութեան ,
Գլարա Ռոտովին ձեռքը բռնեց , սուրբ Կոյսին
աղօթելով որ իրենց միութիւնն օրհնէ :

Երբ դղեակ դարձան , ասպետն իր ճամբոր-
դութեան պատրաստութիւնները տեսաւ . իր
դիտաւորութիւններուն կատարումը ուշացնել
չէր ուզեր : Իր զինուորները ժողվեց եւ անոնց
իմացուց որ հետեւեալ օրը պատրաստ գտնը-
ւին . Դղեակին մէջ ամեն բան տակն ու վրայ
եղած էր . ամեն մարդ զբաղած էր զէնքեր
մաքրելու կամ զէնքերու պահպանութիւն ընե-
լու , եւ կամ ձիերուն կազմածները նորոգելու
եւ բանի մը ժամ քնանալէ ետքը , հետեւեալ
տուաւոտուն , արեգակն ելլելէն ժամ մը առաջ
բոլոր ասպետները սրահը ժողուեցան : Պալա-
տին գաւիթը երկայն ատեն ձիերուն ոտնաձայ-
նէն կը թնտար . յետոյ փողերը հնչեցին . եւ
կամուրջը վար իջեցուցին ու դրօշը բանալով
գունդը ճամբայ ելաւ : Փիչ մը ետքը հեռուն
տեսնուեցաւ որ փոշին ամպի պէս երկինք կել-

ԷՅ . յետոյ ան ալ անհետ եղաւ :

Ատալսդանին բաղձանքը կատարելու համար , տարի մը ետքը Յօտոլֆ Գլարան պսակւելու համար խորանին առջեւ տարաւ . այս արարողութիւնը որ առաքինի եւ ամուսին ըլլալու արժանի երկու սիրելիներն իրենց կենացը մէջ իրարու կը միացնէր , այնպէս սրտաշարժ եղաւ որ ամեն մարդ 'ի գութ շարժեցաւ :

Հարսնիքին համբաւը բոլոր գեղին մէջ տարածուեցաւ , եւ պսակին օրհնութեանը ներկայ դանուելու համար ամեն կողմանէ կարգաւ գեղացիներ կուգային : Գլարա իր առաքինութիւններով եւ դժբախտութիւններովը բոլոր անոնց սիրելի էր , նոյնպէս Յօտոլֆ ալ հասարակութենէն կը յարգուէր : Յօտոլֆ անտառներուն վերակացութեան պաշտօն ունէր . եւ այսովուր դժուարին պաշտօն մը՝ զոր ուրիշները սովորաբար խոտութեամբ եւ գոռողութեամբ կատարած էին , Յօտոլֆ շատ հեղութեամբ ու մարդասիրութեամբ կը կատարէր : Աղքատներու երբէք բռնութիւն չէր ըներ . եւ ուզ որ առանց մասելու հասարակութեան շահուն կրնար ընել , անտառներու օրէնքին դէմ գործուած յանցանքները չտեսնելէ կուգար : Ատէպ խեղճ որսորդներուն իրենց ապօրինաւոր եւ պատժոյ արժանի գործերը կիմացրնէր . եւ անոր սրտա-

ոռչ ու մարդասիրական խօսքերը պատճառ
կ'ըլլային որ ուրիշ համեստ եւ օրինաւոր ըզ-
բաղմանց ետեւէ ըլլան այն մարդիկն որոնց
աղքատութիւնը մոլար ճամբաներ թելադրած
էր : Եւ թէ երբեմն խստութիւն կը բանեցը-
նէր այն գող որսորդներուն դէմ , որոնք բո-
լոր գաւառին մէջ խստասիրտ , անիրաւ , եւ
ստահակ մարդիկ ըլլալով , արդարեւ երկրին
պատռհաս էին : Եւ այս խստութեանց հա-
մար զգաստ եւ մեծարոյ մարդոցմէ երբէք
չանարդուեցաւ . քանզի ինչպէս ըսինք , այն
խստութիւնը խեռ եւ անզգամ մարդոց դէմ
էր :

Այն օրն որ Գլարա եւ Թօսովֆ սեղանին
առջեւ մօտեցան , այն օրն առաւօտուն դղե-
կին մարդիկն , այսինքն Ատալսդանին ծառա-
ները , եւ անոնք որ Գլարային ու Գիւնեկոն-
տային վրայ զարմացող էին , եկան ժողվուե-
ցան վառաւոր հանդերձներով եւ երաժշ-
տական քաղցր նուազներով , այնպէս որ ամե-
նուն դէմքին վրայ ուրախութիւնը նկարուած
էր :

Գիւնեկոնտա որուն վիշտերուն վախճանը
հասած էր , իր սովորական խմաստութեամբը ,
արարողութեանը պատրաստութիւններուն ան-
ձամբ վերակացութիւն կ'ընէր : Երկու ա-

մուսիններուն կերպարանքը զեղխութեան կամ
ընչաւէտութեան երեւոյթը չունէր . Գլարա
արդարեւ վայելուչ եւ ընտիր, բայց անոր պէս
պարզ կերպով հագուած էր . Եւ համեստու-
թիւնը մանաւանդ անոր զեղեցկութեանն աւե-
լի շուք մը կուտար :

Յօտոլֆին հայրն որ առաջ գիւնեկոնտան եւ
Գլարան այնպէս կ'արհամարհէր , շատ քաղց-
րութիւն եւ մարդառութիւն ցուցուց , մա-
նաւանդ թէ ամենէն առաջ ինք եկաւ :

Վերջապէս , մատուան դռները բացուեցան ,
երէցը սեղանին վրայ երեւցաւ եւ պաշտամուն-
քէն ետքը , երկու ամուսիններուն միութիւնն
օրհնեց , եւ անոնց հետեւեալ ատենախօսու-
թիւնն ըրաւ :

« Դուք իրարու ունեցած պարոքերնիդ կա-
տարելու զգացութով այս սեղանին մօտեցած
էք : Դուն Գլարա , գիտես որ ամուսնոյդ օ-
րերը քու խանդաղատական եւ անձնանուէր
խնամքներովդ զեղեցկացնել խոստացար . ա-
նոր հաւատարմութիւն երդուար , եւ քու սըր-
տիդ պէս մաքուր սրտի մը երդումը՝ երաշխա-
ւոր է թէ այն խոստամները հաստատուն պի-
տի կատարես : Դու , Յօտոլֆ , սէր եւ պաշտ-
պանութիւն պարտական ես անոր՝ զոր երկինք
քեզի ընկեր որոշեց : Դուն ան պիտի զօրացը -

նես այն ամենայն դժուարին պարտուց մէջ որ ընտանիքի մը խնամքը կը պահանջէ . ոչ միայն զաւակներու որ պիտի ծնանին , այլ եւ այս ամուսնոյդ ամեն առաքինութեան օրինակ ըլլալ պարտիս :

Աստուած սովոր է օրհնել այն ամուսնութիւնները որոնք յարմար եւ վայելուչ կերպով կը սկսին : Ասոյգ եմ որ , այն աղքատներն ուրոնց միշտ կ'օգնէիր , տկարները զորս միշտ կը հոգայիր . այրին եւ որբն որոնք քենէ այն չափ առատաձեռն պաշտպանութիւն կը գըտնէին , ձեր դուռն ընդունայն չպիտի զարնեն :

Տեսէք աս գեղացիներն , որոնք խանդաղատանօք ձեզի կը նային . Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրայ կարդալու համար , իրենց աղաշանքներն իմիններուս հետ կը խառնեն :

Որդեակիք , երջանիկ էք , որչափ որ երջանիկ ըլլալու արժանի էիք , եւ Տէրն այն բարի գործերուն համար որ հոս սկիտի ընէք , միւս աշխարհին մէջ ձեզ պիտի վարձատրէ :

Յօտով եւ Գլարս արտասուք թափելով , քաղցր այլայլութեամբ մը իրարու կը նայէին : Խնջոյքը պարզ եղաւ , եւ առատ ճաշ մը տըրուեցաւ գեղին խեղճ բնակիչներուն , որոնք այս երկու ամուսիններն օրհնելէ չէին դադրեր :

Գիւնեկոնտա իր զաւկներով Ատալսդանին
դղեակը բնակեցաւ : Թէպէտ իր առջի կացու-
թիւնը բոլորովին փոխուեցաւ . երբէք չհսկար-
տացաւ , եւ առաջուան պէս սկսաւ իր ծառա-
յութիւնները մատուցանել անոնց՝ որոնք իրեն
օգնութեանը եւ խրատներուն պէտք ունէին :
Գլարա եւ Բոտոլֆ բարիք ընելով միշտ իրենց
փափուկ եւ հանճարեղ կերպովը , Գիւնեկոն-
տային բարեպաշտութեան գործերուն ձեռն-
տու էին : Շատ անդամ կը գուշակէին այնպիսի
անձանց կարօտութիւնը որոնց հալարտութիւնը
կամ չափէն աւելի համեստութիւնն ասոնց
օգնութիւնը խնդրելու արգելք էր : Այսպէս
ասոնց անունն ամենուն բերանն էր :

Երեք տարի ետքը , ասպետն իր քաջ զին-
որներովը պատերազմէն դարձաւ . Այն ե-
րեք տարուան մէջ , աւելի հաստատուած էր
'ի բարին , եւ վարքն արդարեւ գովութեան
արժանի էր : Թշուառ յաղթուածներուն դէմ
անոր առատածեռնութիւնն ամենուն զարման-
քը գրաւած էր . արութեամբ միշտ սիրելի ե-
լած էր իր զինուորներուն , որոնք անոր քա-
ջութենէն սիրտ առնելով , անյողդողդ քաջու-
թեան անթիւ օրինակներ տուած էին ,

Ամենուն առաքինութեան օրինակ եղած էր .
եւ անոր գալստեան համբաւը քիչ ատենուան

մէջ բոլոր շրջակայ գեղերը տարածուեցաւ : Երբ դղեակը դարձաւ , ջանաց նորէն ստանալ իր հապատակներուն սէրը որ անոնց դէմ անիւրաւութիւններ ընելով կորսնցուցած էր , ուստի եւ սկսաւ անոնց այն շնորհքներն ընելզոր անոնք առաջ 'ի զուր կը խնդրէին . ուզեց որ յաջողութեամբ ետ դառնալը ցնծութեամբ տօնեն . եւ ասոր համար բոլոր շրջակայ գեղերուն ազնուականները հրաւիրեց ու անոնց շքեղ հանդէս մը ըրաւ : Գեղացիներն անգամ չմոռցուեցան . դղեկին գաւիթներուն մէջ սեղաններ դրուեցան , եւ ասպետն անոնց այցելութիւն ընելով , ամեն մէկուն իր վիճակին համեմատ քաղցր խօսքեր կ'ընէր : Այն տօնին օրն ազնուական օրիորդի մը հետ ամուսնանալ ուզեց , եւ օրիորդն անոր երջանիկ փոփոխութիւնն իմանալով , առաջարկութիւնն ուրախութեամբ յանձն առաւ : Աս միութիւնը տեղի ունեցաւ նոյն մատրան մէջ , ուր ինք դարձի եկած էր , եւ ուր տարի մը առաջ Գլարային եւ Շոտոլֆին ամուսնութեան հանդէսը կատարուած էր :

Ասպետին այսպէս սքանչելի կերսլով առաքինութեան դառնալուն համբաւը բոլոր հեռու տեղեր տարածուեցաւ , եւ անոնց խօսակցութեանը նիւթ եղաւ : Բոլոր բարեպաշտ եւ

առաքինի մարդիկ այցելութեան կ'երթային
գղեկին մատուռը՝ ուր այս սքանչելիքը տե-
ղի ունեցած էր . այնպէս որ մատուռն այ-
նուհետեւ ուխտատեղի եղաւ : Ամեն մայր
կուզար սուրբ Կոյսին աղաչելու որ իրեն ալ
Գլարային պէս գեղեցիկ եւ առաքինի աղ-
ջիկ մը շնորհէ , եւ հայրերը կ'աղաչէին որ ի-
րենց որդիները Թօտովին բարուցն ու առաքի-
նութեանցը Վիճակակից ըլլան :

ՎԵՐՋ



